

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՄԱՅՑՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅՔ ԵՐԿՐՈՒՄՆԵՐ ԱՐԿԵՐԱԸ ԼՅՅԱՅԱՈՒ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ  
ԼՈՒՄԻՆՈՍԿԵԼԱՆՆԵՐԻ ԳՐԵՐԸ:

ՔՐՈՅՈՒՆ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՄԱՆ ՄԱՆԸՄԱՐԱՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄՈՒՍԱՆ "ՇԱՄԱԼՅԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԵՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՑՔԻՑ

[www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ԵՆԴՐՈՒՄԸ ԵՎՆ ՈՐ ԺՐՏՆԻՄ ԵՔ ՄՏԵՐ ԿՈՑՔԻՑ  
ՑԱՆԿՈՒՄԸ ԵՎՆ ԶՈՒՆԻ ԸՆԹԵՐՏՈՒՆԻՑՈՒՄ:



ԳՐԵՐ ԱՐԵՒՆ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

ԻՆՅԱ ԱՐՅԱԿԵՆԻՅԻ

ՕՐՆԿԿԱԾ  
ՆՆ



Երևան - 1993

# Օ Ր Հ Ն Վ Ա Ժ Հ Ո Ղ

(ԲՆՆԱՍՏԵՂԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ՊԱՏՄՎԱԺՔՆԵՐ)

«Աղվանք»  
Երևան—1998

Գիրքս նվիրում եմ արցախ-  
յան ազատամարտիկների,  
մեր սուրբ նահատակների  
հիշատակին

հեղինակ

«Օրհնված հող» ժողովածուն, որը հեղինակի երրորդ գիր-  
քն է, կազմվել է 1988—93 թվականներին գրված բանաս-  
տեղծությունների, պատմվածքների «Արցախական» շարքից:

Ղարաբաղյան սուրբ շարժումն իր նվիրյալների կողքին ծնեց  
նաև պարագլուխ մաքիավելականներ ու նույրիշներ, որոնք էլ  
ազգին պարտադրված պատերազմական այս դժվար օրերին ավե-  
լի ծանրացրին անկախության ուղին բռնած հայ ժողովրդի տըն-  
տեսական, քաղաքական և բարոյահոգեբանական վիճակը՝ նույ-  
նիսկ մատաղ սերնդին մղելով նաև դեպի չարչիություն, այլասե-  
րություն, որն առաջ է բերել զայրույթ, հիասթափություն, ազգի  
միասնականության սասանում:

Սակայն բոլորի համար էլ անժխտելի է, որ ազգը ազգ կդառ-  
նա, եթե իր մեջ ուժ գտնի, ապրի անկախ՝ կերտելով իրավական  
պետություն:



Լեռների գրկում դու անուշ պարտեզ,  
 Ավերում են քեզ, չքնաղ Ղարաբաղ,  
 Յոթ տասնյակ տարի սրտիդ մեջ մշուշ,  
 Դու՝ շղթաներում, անվախ Ղարաբաղ...

Եկել է ժամը, արծիվների քաջ  
 Ելել են արդեն, տանջված Ղարաբաղ,  
 Պիտի արշավեն, էլ չկա նահանջ,  
 Որ լինես ազատ, անկախ Ղարաբաղ...

Բավ է տառապես, տանջվես դու բոլոր,  
 Նոր դավերի մեջ, պրկված Ղարաբաղ,  
 Թշնամիների՝ կամքիդ դեմ անգոր,  
 Հայոց հինավուրց Արցախ—Ղարաբաղ...

Դե արի մնա, կռիվ է արյան,  
 Էլ մի համբերի, խաբված Ղարաբաղ,  
 Հայ ես, հայ մնա ու միշտ հայկական,  
 Կյանքս քո կյանքին մատաղ, Ղարաբաղ...

Էլի Սիլվան է, Սիլվան է խոսում,  
 Հոգո՛ւ աշքերից արցունք է հոսում,  
 Բայց կույ է տալիս կաթիլները հուր,  
 Ու բացում մեր դեմ փրկությանն նոր դուռ...

— Իմ հայ ժողովուրդ, Ղարաբաղ երկիր,  
 Հասել է ժամը, էլ մի ընկրկիր,  
 Վերջին մարտն է սա, ուրիշը չկա,  
 Էլ չկա նահանջ, արևս վկա:

Թե չեք հավատում, ինձ պատասխանեք,  
 Ո՞ր է Մեծ Հայքը, Արցախը, խոսեք,  
 Փոթորկվելը թող մեր նիրհը վանի,  
 Որ գոնե պտղունց հայ երկիր լինի:

Դե թիկունք եղեք, ելա՛ծ Արցախին,  
 Մի հավատացեք ուս-թուրքի խաղին,  
 Արցախին տվեք հուր ու շունչ Հայկյան,  
 Որ անմեռ պահի ոգին նահրյան:

Ինչպես պահել է նա դարերով ձիգ,  
 Իր վրա կրել Մաշտոցյան երկինք,  
 Մինչև մի հրեշ, չեչոտ, բեղակեռ,  
 Արցախս հանձնեց յաթաղանին կեռ,

Որ կամաց-կամաց նա փոշիանա,  
 Լեզուն կորցնի, իրեն ուրանա,  
 Որ չկարենա էլ մեջքը շտկել,  
 Այդպես զավթվել են տուն ու տեղը մեր:

Էլ խաբվել չկա, ոչ էլ երկնչել,  
 Քանզի չարը մեզ այնքան է խաչել,  
 Որ էլ հարության փրկություն չկա,  
 Թե մենք չբերենք փրկությունը մեր:



Միաբան եղեք, որ դատը շահենք,  
Ազգի անթեղված հուրը վառ պահենք,  
Նոր չէ թշնամու արյունոտ խաղը,  
Ազգովին պիտի փրկենք Արցախը:

. . . . .

Խոսում է Սիլվան, խոսում դողդոջուն,  
Հոգուց է պոկվում ամեն մի հնչյուն,  
Ալիք է տալիս ամբոխը անտառ,  
Հետո բռունցքվում ու դառնում է ժայռ...

փետրվար—1988 թ.

«Ախ, երբ պիտ լեռների պես վեր բռունցքվի ձեռքերն հայոց»:

**Հ. Ծիրազ**

**ԶԱՅՆ ԾԻՐԱԶԻՆ**

Վեր կաց, Ծիրազ, վեր կաց ու տես ինչեր եղան Ղարաբաղում,  
Վեր կաց ու տես ոնց բանավեցինք մեր հինավուրց հայոց հողում,  
Երբ խոչացան լեռների պես, բռունցքվեցին ձեռքերն հայոց,  
Ղարաբաղը մոր գիրկն ուզեց, անուշ գիրկը՝ արևագոծ...

Երբ փորձեցինք մեր Արցախի ու Մեծ վշտի խոսքը ասել,  
Ինքն իր մեջ վերք ու ցավից կծիկ դարձած սիրտը բացել,  
Որ չմնա էլ նա գերի «աստվածատուր» եղբոր գրկում,  
Որ չմեռնի քրքրվելով, ծվատվելով՝ դառն, անքուն...

Որ անթեղված հոգու ճիչը էլ չժայթքի հրափրփուր,  
Որ թոթափի բռնակալի դավով թողած ցավը հանուր,  
Որ նետել էր այդ դահիճը՝ որոգայթը իր անհոգի,  
Որ Արցախս հոշոտվելով՝ մի օր փչի շունչ ու ոգի...

Ի պատասխան այդ բոլորի, «եղբայրներս» նախճիր արին,  
Այն էլ այսօր՝ Սումգայիթում, ութսունութի փետրվարին,  
Որ ծնկի գա Ղարաբաղը ու վերանա Հայկյան ոգին...  
Ինչպես արեց թուրք բորենին, այն սև տարին՝ տասնհինգին,

Եվ ո՞վ արեց, իբրև քառսուն եղկ թմրամոլ ու խուլիզան,  
Այդպես ասին օր-ցերեկով, բերաններիս դրին փական,  
Ապա՝ անմեղ զոհերի դեմ՝ երեսուներկու թիվ գրեցին,  
Չկա այլ թիվ, այդ պնդեցին, մեր աչքերում խոր մեխեցին...

Վեր կաց, Ծիրազ, վեր կաց, դու էլ ինձ պես գծվի այս նոր դավից,  
Էլ ո՞ւմ դիմեմ, ես գլուխս ո՞ր քարին տամ այրող ցավից,  
Որ «Սուրբ տանը» մեկն էլ դարձավ ու ճանաչվեց եղկ ցեղասպան,  
Հենց այդ մեկը եղավ էի թուրքի թոռը՝ մորթով գառան...

Սակայն դա քիչ համարեցին, մրոտեցին ազգիդ վարկը,  
Նրանց լ՛գվով, ում տվել ենք աղ ու հացով մեր սուրբ թագը,  
Դե ինձ ասա, էլ ո՞ւմ կանչեմ այրող ճիչով ազգակարոտ,  
Եվ ո՞վ է նա, որ կարող է Արցախ բերել լույս առավոտ...



Ի՞նչ ես տնկել աչքդ արևոտ,  
Մի բուռ հողիս, վարդաստանիս,  
Ղարաբաղիս մայրակարոտ,  
Որ դարձել է վիշտը դարիս...

Դե ետ քաշիր թաթը քո ծուռ,  
Ծանոթ ենք քեզ, ծանոթ վաղուց,  
Զեռագրիդ՝ մոխիր ու հուր,  
Եվ բուր թրիդ՝ կեռակտուց...

Էլ չես խաբի սին խոսքերով,  
Եվ մահիկով՝ կարմիր ներկված,  
Որ տեր դարձար եղկ ծափերով,  
Իմ Արցախին՝ սրով պահված...

դեկտեմբեր—1988 թ.

Ծանր մաշվում են օրերդ դաժան,  
 Օրերդ պղտոր, զրներդ վերքի,  
 Ախ, արկված Արցախ, վշտից անբաժան,  
 Ե՛րբ պիտի հասնես սուրբ հաղթանակի...

Դու շատ ես տեսել և կռիվ և մահ,  
 Բայց փյունիկվել ես ու հարատևել,  
 Ժանտ ոսոխի դեմ հառնել ես անահ,  
 Սրբությանք պահել վանք ու հորովել...

Եվ սյուօր նորից արյուն է, հառաչ,  
 Փորձում են կրկին, ախ, քո սուրբ հոգին  
 Պղծել ու մորթել աշխարհի առաջ,  
 Ո՛ր հավերժ մարվի մաշտոցյան ոգին...

Դու պիտի կռվես, կռվես բռունցքված,  
 Մոր թևով պիտի գորանաս էլի,  
 Որ քո պապերի սուրբ տանը ծնված  
 Քաջ կորյունների շղատնան գերի...

1989.

## ԶՊԵՏՔ Է ՄՆԿԵՍ...

Յոթ տասնյակ տարի հոշոտել են քեզ,  
Դեռ կհոշոտեն այդպես անխնա,  
Քանզի ուզում են շքաստա երգես,  
Արցախ անունը՝ ջնջվի, վերանա...

Այսօր նենգաբար պրկում են նորից  
Վիզդ օղակող պարանը գազիր,  
Հետո էլ ասում՝ ողջուն ազգերից,  
Մի երկինք ունենք, մի տուն լուսածիր...

Ասողին ինչ փույթ, որ դու չես լինի,  
Կամ էլ կդառնաս նոր Նախիջևան,  
Սուրբ Գանձասարդ՝ մեշիդ իսլամի,  
Զանգիդ դողանջը՝ կերկերող ազան...

Էլ մի հավատա կարմիր կոչերին,  
Ծակատագիրդ քո ձեռքին է լոկ,  
Դու լավ ճանաչիր նոր «աստվածներին»,  
Տապան կդառնան նրանք էլ՝ ջոկ-ջոկ...

Չկա այլ ուղի, չպետք է ծնկես,  
Դու անվախ ճոճիր թուրդ հավլունի,  
Թե հանկարծ մի օր դու ետ ընկրկես,  
Իմացիր, հենց դա մահդ կլինի...

1989 թ.

Նվիրում եմ ղարաբաղյան շարժմանը նվիրված, բայդ արժանվույն չգնահատված արցախցի Աղավնի Դանիելյանին

**ՄԵՆՔ ՀԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ...**

1988 թվի երևանյան արևելակողմյան օրերից մեկն էր: «Ղարաբաղ Կոմիտեն» Հայաստանում համընդհանուր գործադուլ էր հայտարարել:

Այդ երեկո Հայկը, ձեռնափայտը ոտքերի արանքում՝ ականջըն էլ ձայնի, նստել էր գլխահակ ու վերհիշում, թե ինչպես քսաներկու տարի առաջ իրենք էլ բարձրացրին պողի նման անլուծելի Ղարաբաղը Հայաստանին միացնելու հարցը, բայց... «Նրանցից կենդանի մնացած վկաներից մեկն էլ ես եմ, որ այսօր ֆիզիկապես ի վիճակի չեմ քայլել, գոնե ուրիշների նման հրապարակներում բռունցք բարձրացնել: Սրան խորհրդային պետությունն կասեն... Հիմա էլ աղջիկս է... Վաղը նրան էլ կնզմեն», — մրմնջում էր նա, ասիլ սեղմում դրսից եկող ձայներից թաքտացող սրտին, կարծելով ուր որ է աղջիկը դուռը կբացի:

Եվ մտորման մեջ քանի՜-քանի՜ անգամ նայեց ժամացույցին, հանգստացնող հար կուլ տվեց ու անհամբեր սպասեց:

Գիշերը կիսվել էր, երբ կարծես երագում լսեց ու ճանաչեց դռանը մոտեցող աղջկա քայլերի տկտկոցը, և ուրախությունից կրկին թաքտաց սիրտը:

Աղավնին ներս մտնելուն պես համբուրեց հորը և ասաց.

— Ներիր, հայրիկ, գիտեմ, շատ ես անհանգստանում, բայց... դու էլ գիտես, թե ժամանակին ինչ ծանր ու պատասխանատու բեռ էիք փորձել վերցնել ձեր ուսերին:

— Է՛, աղջիկս, վախենում եմ ձեզ էլ մեր օրը գցեն, մի հավատացեք էդ «պերեստրոյկա» բարբաջանքին, սա մասղաց պետությունն է ու այդպիսին էլ կմնա: Էս մարդասեր կոչված պետությունը...

Հայրը խոսում էր, իսկ աղջիկը հիշում...

...Տարիներ առաջ էր, ինքը դեռ ցածրդասարանցի էր, երբ հորը՝ «հակասովետական տարր» Հայկին, գիշերը տարան և հաշմանդամ դարձած հետ եկավ տարիներ հետո:

Այն ժամանակ չէր հասկանում, թե ինչ է նշանակում «հակասովետական» տարր, թեև արդեն հանգուցյալ մայրը բացատրել էր, որ հայրիկին դատապարտել են նրա համար, որ նոյեմբերի յոթի շքերթում ասել էր՝ «Ի՞նչ ազատություն, ի՞նչ ազգերի եղբայրություն, ի՞նչ կեցցե, երբ մարդը իր գլխի տերը չի, երբ Նախիջևանը, Ղարաբաղը հայաթափվում են»:

\* \* \*

Հայր ու աղջիկ գրուցելով թեյեցին:

Աղավնին այն համոզմանն էր, որ անշուշտ «պերեստրոյկան» ամեն ինչ կուղղի, իսկ հայրը առարկում էր, թե քանի կա կոմունիստական կուսակցությունը, զուր է հույս փայփայելը:

— Հայրիկ, հիմա ամբողջ հայ ժողովուրդն է մեկ մարդու նման ոտքի կանգնել, իր ցավը, պահանջը հասցրել աշխարհին:

— Աշխարհն էլ սուտ է, աշխարհը ուժեղներին է, աղջիկս: Այդ աշխարհ կոչվածը մեզ խաբել է, դեռ կխաբի...

Հայկը թեև խոստացել էր չխառնվել աղջկա գործերին, սակայն անսպասելի առաջարկեց դուրս գալ այդ ինքնասպան քաղաքական խաղից:

— Հայրիկ, այդ ի՞նչ ասացիր, մի՞թե դու ինձ ստիպում ես մորթապաշտ դառնալ, երբ քո կրած տառապանքն ու անկոտրում կամքն են իմ ուղեցույցը:

— Բալես, ախր դու... աղջիկ չլինեիր... ես որ կրկաթի պես պինդ տղամարդ էի, ի՞նչ դարձրին:

— Հայրի՛կ, հոգով դու էլի նույնն ես, ինձ քեզնով են ճանաչում: Դու...

— Ներիր, հույս ու հավատս: Դու իրավացի ես, հայրենիքը անձնագոհների արյունով է հարատևում: Իմ մեջ հանկարծ գլուխ բարձրացրեց ծնողը, ներիր,— կերկերաց նրա ձայնը:

Աղավնին փարվեց արցունքները սրբող հորը:



Երբ առավոտյան Հայկը արթնացավ, աղջիկը արդեն տանը չէր: Վատ երազից ավելի դառնացած, նա սկսեց հետ ու առաջ քայլել:

Աղավնին հորը տեղյակ էր պահել, որ վաղը գործարանի կուսբյուրոյում պիտի լավի իր հարցը՝ կամ վար դնել կուստոմսը, հեռանալ գործարանից, կամ էլ՝ շարժումից:

Հայկը կուզեր գնալ գործարան, անողոք ճշմարտությունն ասել կարմիր դրոշով վեր բարձրացած ազգուրաց մարդկանց, բայց ինչպես գնար, երբ հեռակների օգնությամբ հազիվ էր մի սենյակից մյուսն անցնում:

Արդեն կեսօր էր, բայց Աղավնին, իր խոստմանը հակառակ, դեռ չէր զանգել:

— Ախ, Աղավնի, ինչո՞ւ չես զանգում,— մրմնջաց հայրը՝ քանիերորդ անգամ նայելով ժամացույցին: Հետո չհամբերելով յնքը զանգեց: Պատասխանող աղջիկը «մի բուպե» ասելով՝ լռեց: Հնկալուչից աղմուկ էր լսվում:

— Ո՞ւմ եք ուզում,— նորից խոսեց պատասխանողը:

— Բալես, Աղավնուն եմ ուզում,— դողդողաց Հայկի ձայնը:

— Ի՛հ, ի՛հնչ: Աղջիկներ, դե ձեներդ կտրեք, տեսնեմ էս մարդը ինչ ա ասում:

— Աղջիկս, Աղավնուն եմ ուզում,— նորից կրկնեց Հայկը:

— Հայրիկ, Ձեր Աղավնուն էլ թոցրին:

Հայկի գլուխը պտտվեց, աչքերը մթնեցին, եթե բազմոցին նստած չլիներ՝ անպայման կփլվեր: «Ուրեմն աղջիկս էլ...»: Նա կծկված ու դողդողալով լսափողը տեղը դնելով, հիշեց իր թատերականացված դատը, դաժան, նվաստացուցիչ բանտային օրերը: Բայց հանկարծ մոլեգնության մեջ մոնչալով՝ հեռակներից մեկը խփեց հատակին: Իսկ երբ հեռակի գլուխը մնաց դողացող ձեռքում, նոր հասկացավ, ինչ է արել:

Սակայն նրան թվաց, որ կարող է մեկ հեռակով քայլել: Բայց փորձելն ու փլվելը մեկ եղավ:

Նա անբնական ինչ-որ ձայն հանելով, չորեքթաթ մոտեցավ բազմոցին, իջեցրեց հեռախոսը և ոտքերի արանքում դնելով փորձեց պտտեցնել հետ ու առաջ շարժվող հեռախոսի սկավա-

նակը, ինքն իրեն համոզելով, որ պատասխանող աղջիկը Աղավ-  
նու աշխատանքային ընկերներից չէր, ուրիշ էր, արածն էլ  
կատակ: Նրան թվում էր, թե ուր որ է զանգը տեղ կհասնի, աղ-  
ջիկը կպատասխանի, սակայն հեռախոսը անընդհատ զբաղ-  
ված էր:

Նա հեռախոսը հատակին դնելով մրմնջաց. «Ինչո՞ւ ես էլ  
չմահացա, իմ երեսից տանջահար եղած լուսահոգի Հեղինեիս  
հետ: Ախ, Աղավնի, ախր...»:

Հետո փորձեց վերհիշել աղջկա ընկերներին, ընկերուհի-  
ներին, որ զանգի, իսկությունը իմանա: Նա դեռ փորձում էր մտա-  
բերել, երբ հեռախոսի ձայնից վեր թուավ ու թիթեռ բռնող երե-  
խայի մեան հափշտակեց լսափողը: Զանգողը Աղավնին էր:

— Աղջի՛կս...— կերկերաց նրա ձայնը:

— Հայրիկ, ի՞նչ է պատահել:

— Ոչինչ, որտե՞ղ ես:

— Հայրիկ, մի անհանգստանա, իմ գործերը լավ են, կա-  
լանված տղաներին էլ ազատեցինք: Մեր գործարանի բանվոր-  
ներն էլ մեկ մարդու մեան գործադուլ արեցին: Մենք հաղթելո՛ւ  
ենք, մենք հաղթելո՛ւ ենք:

Հայկը մեջքը բազմոցի եզրին ավելի հեռելով, «տու-տու»  
անող լսափողն էլ սեղմած, մտովի կրկնում էր քիչ առաջ անձա-  
նոթ աղջկա կատակը՝ «Հայրիկ, Ձեր Աղավնուն էլ թոցրին» ու  
հիշում իր բանտային օրերը:

Վաղ առավոտյան մայրս ասաց, որ Աթաբեկ դային մեռնում է: Վերջինս մեր հարևանն էր, գյուղի հին որսկաններից մեկը՝ բարի ու խաթրաշատ մի մարդ: Թեև նա երկար տարիներ անտատապահ, հանդապահ էր եղել, բայց որսկան Աթաբեկ էին կոչում: Նրան առաջին անգամ տեսել էի մի սևաթույր ձիու վրա, հրացանն ուսած, մեր տան կողքի ճամփով անցնելիս:

Ամեն աշնան Քոի ափերը որսի էր գնում ու բերած որսից մեզ էլ բաժին հանում: Հայրս վայրի խոզի մսից խորոված էր անում, մայրս էլ օձաձուկն էր տապակում, հրավիրում որսկանին, որ հաց ուտեն, գրուցեն:

Հաճախ կլանված լսում էի, երբ Աթաբեկ դային պատմում էր, թե ինչպես են որսահավածները հարայ-հրոցով, շների օգնությամբ, խոզերին եղեգնուտներից դուրս քշում:

Ես դեռ մտորումների մեջ էի, երբ մայրս նորից խոսեց.

— Վեր կաց գնա, խեղճ մարդը քո անունն էլ է տալիս:

Արագ հագնվեցի ու դուրս եկա: Մեր տները բաժանող ցանկապատի փոքրիկ դռակով ներս մտա նրանց բակը:

Չալպուտուրիկ շունը աղիողորմ կաղկանձում էր:

— Այ անտեր, դո՞ւ էլ գիտես, որ տերդ մեռնում ա,— ասաց որսկանի կին Հերիքնազ տատիկը՝ ծոմոված ալյումիճե կաթսան դնելով շան առաջ:

Բայց շունը, առանց տեղից շարժվելու, շարունակում էր կաղկանձել:

— Ա գլխակեր, ինչո՞ւ ես սիրոս քրքրում,— թնկթնկաց Հերիքնազ տատիկը՝ կարմիր խլեղի փեշով արցունքները սրբելով:

«Ծո՞ւնն էլ գիտի, որ տերը մեռնում է»,—մտովի հարց տվեցի ինքս ինձ՝ մոտենալով Հերիքնազ տատին:

— Վա՛՛յ, եկա՞ր, էդ հալևորը քեզ ա ուզում, գնա տես ի՞նչ ա ասում:

Հարազատները շրջապատել էին մահամերձին: Քաղաքից իրենց կանանց ու երեխաների հետ եկել էին մեռնողի երկու տղաները: Հարսները, թոռները անտարբեր ներս ու դուրս էին անում: Երբ ներս մտա, ինձ թվաց, թե բոլորի հայացքն ուղղվեց դեպի

ինձ: Աղջիկը մահամերձ հոր կողքին նստած շոյում էր նրա սըր-ված դեմքն ու կրկնում.

— Այ հեր, ջհանդամը թե այդ անտերը տարան, հիմի քո ինչի՞ն է պետք:

Մահամերձը հավանաբար ոչինչ չէր լսում, բայց թույլ ու խզված ձայնով կրկնում էր.

— Ա՛հ, պառա՛վ, որտե՞ղ ես, էդ անտերը բեր:

— Կբերի, կբերի, աչքերդ բաց, այ հեր,— լացում էր աղ-ջիկը:

Ես էլ գիտեի, որ խոսքը երկփողանի հրացանի մասին է: Օրեր առաջ էին միլիցիայից եկել տարել, ասելով, թե կարգա-դրություն կա: Աթաբեկ դային լսել էր, որ Ստեփանակերտում ժողով էր եղել և ժողովականները ասել էին, թե Ղարաբաղը պիտի միանա Հայաստանին, իսկ Բաքուն էլ ասել էր՝ հողը մերն ա: Եվ որպեսզի ախպեր դարձած հարևանները իրար չկոտորեն, հրացանները հավաքել էին: Իսկ մի քանի օր հետո, երբ Աթաբեկ դային լսել էր նաև, որ «ախպեր» կոչվողները հար-ձակվել են հարևան հայ գյուղի վրա, և ժողովուրդը մահակով ու եղանով է դուրս եկել իրենց հողը պաշտպանելու, մոռնալու է.

— Բա ես նեմեցի գանգը ջարդեմ, որ էսօր գլուխս լեշահոտ թուրքի ոտի տակ դնե՞մ:

Այդ օրից Աթաբեկ դային անկողին էր ընկել ու գառան-ցանքի մեջ իր հրացանն էր ուզում:

\* \* \*

Տարիներ առաջ էր... Արդեն բարձր դասարանցի էի, երբ մի օր հանդիպեցի հանդ գնացող Աթաբեկ դայուն: Խնդրեցի ինձ էլ թույլ տա հետը գնալ, ուզում էի կրակել սովորեցներ:

— Բալես, դե որ գալիս ես, առ, ուսդ գցիր,— ասաց նա՝ վերցնելով հրացանի փողից կախած ուտելիքի կապոցը:

Անպատմելի ուրախություն ապրեցի, երբ հրացանը ձեռքս վերցրի: Ես էլ գիտեի, որ Աթաբեկ դային սիրում էր հրացանը ուսած գյուղից դուրս գալ, մի աղբյուրի մոտ նստել ու հաց ուտել: Մի անգամ, երբ հարցրել էին, թե Աթաբեկ դայի, էդ հացը չե՞ս կարող ձեր տանն ուտել, պատասխանել էր.

— Ախր, կուլ չի գնում: Էս անտերը հենց ուսիս եմ գցում, տնից հանում է:

Ճանապարհին փորձեցի հացի կապոցն էլ վերցնել, բայց Աթաբեկ դային գլուխն օրորեց.

— Չէ, բալա ջան, ինչ անենք, որ ծերացել եմ, էլ ձի չեմ կարում նստել, թող մի գործ էլ ես անեմ:

Ես չգիտեի, թե որ աղբյուրի մոտ ենք նստելու, բայց լուռ հետևում ու լսում էի Աթաբեկ դայու հիշողությունները՝ իր անցած, գնացած օրերից: Ծունը մեր առջևից էր գնում՝ մեկ-մեկ հոտոտելով ճանապարհին դրոշմված ու կոշտացած ոտնահետքերը:

Երբ Աթաբեկ դային նստում էր հանգստանալու, ես էլ էի մի թումբ ընտրում, հրացանը գրկիս նստում, շոյում, ուրախանում՝ թանկագին խաղալիք գտած երեխայի նման:

Երբ մտանք «Քշաթախկի» ձորը, ավելի զգացվեց աշնան շունչը: Քարքարոտ գետակը բարակել էր, իսկ ծառերը դեղնակարմիր գույն էին հագել: Հատուկենտ երևացող մոշահավերը, մեզ տեսնելով, կորչում էին թփերի մեջ:

Աթաբեկ դային նստեց մի մեծ քարի վրա, որի կեսը գետակի մեջ էր, կուացավ, բուռը թրջեց, մի քանի անգամ քսեց երեսին՝ «օխա՛՜յ» անելով: Հետո գետի կողքի քարերի ու մացառների միջով բարձրացանք գետակն ի վեր:

Մեր առջև բացվեց մի կալաչափ կանաչատեղ: Նրանից մի քիչ վերև էլ քարերի մեջ աղբյուրն էր, որի առջև փոված ջրկոտեմի ու կանաչամոխրագույն դաղձի թփերի ծայրերը հասնում էին քարքարոտ գետակին:

Աթաբեկ դային ավելի խիտ կանաչ տեղ ընտրեց, տնքտընքալով նստեց, ետ տարավ կապոցի հանգույցն ու դարձավ ինձ.

— Դե, բալա ջան, էդ ջրկոտեմից, դաղձից քաղիր, ջրում էլ թաթախիր, բեր հաց ուտենք:

Երբ ես էլ նստեցի, շունն էլ եկավ մեկնվեց մեր կողքին:

Աթաբեկ դային մի կտոր միս ու հաց գցելով շան առաջ, ասաց.

— Փոքր ախպեր, դու էլ կեր:

Ծունն իր բաժինը իսկույն կուլ տվեց, գլուխը դրեց առջևի թաթերին, սկսեց աչքերը բաց ու խուփ անել, կարծես մեզ

աչքով էր անում: Աթաբեկ դայի՛ն ստիպում էր ինձ, որ տապա-  
կած հավի միսն ուտեմ, ոսկորներն էլ նետեմ շանը: Հենց ոս-  
կորը նետում էի, շունը վեր էր թռչում, օդում էլ որսում, նորից  
մեկնվում ու խրթխրթացնում: Աթաբեկ դայի՛ն ավելի շատ ջըր-  
կոտեմով ու դաղձով պանիր էր ուտում, քան միս: Հետո նա  
թիկն տվեց մի քարի ու ննջեց:

Քիչ հետո վեր կացավ, աղբյուրից ջուր խմեց, օխայ անելով  
եկավ, էլի թիկն տվեց ու ասաց.

— Բալես, հրացանը վերցրու նշան բռնի ա՛յ է՛ն թմբի վրա:

Մի քանի անգամ դատարկ հրացանը նշան բռնելուց հետո,  
Աթաբեկ դայի՛ն ստուգեց, մի փամփուշտ տվեց և ասաց.

— Դե, կրակիր:

Ծնկաչոք նշան բռնեցի: Զգանը քաշելն ու թփի ցրիվ գա-  
լը մեկ եղավ: Ծունը, որ կարճ ականջները սրած կանգնել էր  
կողքիս, երկու ուսույունով հասավ ցրիվ եկած թփին, հոտոտեց  
ու հետ եկավ:

— Չէ՛, շանը խաբել չի կարելի:

Նա, մեկ փամփուշտ էլ տալով, ժպտաց.

— Էս էլ առաջին որսի համար:

Ուրախությունից ուռքերս թուլացան: Բայց փամփուշտը փո-  
ղում դնելուց հետո զգաստացա ու ինձ տղամարդ զգացի: Դեռ  
մի քանի քայլ էի արել ձորն ի վեր, երբ ձորի քարքարոտ ափին  
նկատեցի ինչ-որ թռչուն: Ծնկեցի ու նշան բռնեցի: Ուրախու-  
թյունից հրացանը թույլ էի սեղմել ուսիս: Պայթյունից ու ուսիս  
ցավից կծկվեցի, բայց նկատելով, որ թռչունը քարերի մեջ թևա-  
կոտոր սողում է, իսկ շունը թռչում է դեպի որսը, մոռացա ցավս:

Ծունն առջևից՝ որսը բերանին, ես էլ ետևից, մոտեցանք քա-  
րին թիկն տված Աթաբեկ դայուն:

Նրա բարի աչքերում ցոլանք կար, ես չգիտեի ինչպես շնոր-  
հակալ լինեմ նրան վստահության համար:

— Ապրես, բալես, իմ մեռնելուց հետո էս հրացանը բռնե  
ա,— ասաց Աթաբեկ դային:

Այդ օրից, ինչպես ինքն էր ասում, դարձա Աթաբեկ դայու  
պուճուր ընկերը: Կիրակի օրերը միշտ ինձ հետը հանդ էր տա-  
նում և կատակով ասում.

«Պուճուր ընկեր, արի գնանք միասին հաց ուտենք»: Հրա-

ցանը միշտ ես էի տանում: Բայց ամեն անգամ, երբ հրացանն ինձ էր տալիս, ասում էր.

— Էս անտերը հեկոց ուսիս եմ գցում, ինձ տնից հանում է, հե՛յ, ջահելություն:

Մի օր էլ խոսք բացվեց ձիու մասին:

— Ձիւն մուրազ է, մուրազ: Տղամարդը առանց ձիու ու հրացանի...

\* \* \*

Ես դեռ հիշողությունների հետ էի, երբ ներս մտավ համազրուհացիներից մեկը՝ երկփողանի հրացանը ուսին:

Ծան աղիողորմ ձայնը ավելի սրտաճմլիկ դարձավ: Ես պետք է մահամերձին ասեի, իր հրացանը հետ եմ բերել:

Երբ նա լսեց իմ ձայնը, փորձեց բացել աչքերը, բայց չբացվեցին: Հետո դողացող ձեռքերը մի կերպ մեկնեց առաջ:

Ես երկփողանին զգուշորեն դրեցի նրա ափերում, իմանալով հանդերձ՝ որ իր հրացանը չէ: Նա շոյեց ու համբուրեց երկփողանին և մարած ու հևասպառ ձայնով ասաց.

— Էն շանը բաց թողեք, ինձ ա ուզում:

Իրոք, քիչ հետո շունը կաղկանձելով ներս մտավ ու թաթերը դնելով հիվանդի կրծքին, սկսեց լիզել ձեռքերը, երեսը:

Աթաբեկ դային, աչքերը փակ, գրկեց նաև շան գլուխն ու հևաց.

— Վրույր, հո՞ւրս, ձեռքս ինձ տո:

Ես ձեռքս դրեցի նրա կոշտ ու սառող ափում, իսկ նա հրացանը դեպի ինձ հրելով նորից հևաց.

— Առ, քեզ հալալ լինի, հողը պահողը տու ըս, հողը պահողինն ա:

Մահամերձը թե էլ ինչ էր ուզում ասել, չասաց, որովհետև կապտած շրթունքները կարկամեցին, գկրտացողի նման ակամա, անձայն շարժումներ արեց ու լռեց հավիտյան:

\* \* \*

Մի քանի ամիս հետո նրա շիրմին գերեզմանաքար դրվեց: Քարին քանդակված էր՝ հրացանն ուսած, ձիու վրա նստած Աթաբեկ դային, տակն էլ գրված՝ իր որդիներից, 1988 թիվ:



Մեռնում էր տնից ու տեղից բռնի արտաքսված ու հալածված մարդը, որը դեռ նոր էր բուլոբել հիսունը: Երեք տարի առաջ էր, որ փոթորկվեց Ղարաբաղը: Առաջին օրերին շրջաններից, գյուղերից մարդիկ շարան-շարան գալիս էին Ստեփանակերտ, իրենց հետ բերած կարգախոսներով, դիմանկարներով խառնվում հրապարակում ծովացած ամբոխին և նրանց հետ վանկարկում՝ «միացում», «պերեստրոյկա», «պարտիա», «Լենին», «Գորբաչով», հավատալով, որ եկել է Ղարաբաղը թուրքի լծից ազատելու, մայր Հայաստանին միացնելու բաղձալի ժամը: Մեռնողը «Կոունկ» կոմիտեի անդամ չէր, բայց ինքն էլ էր մի քանի անգամ ելույթ ունեցել, ոգևորել, հավատացրել ծառու եղած ամբոխին, որ թուրքի լծի տակ ապրելը Արցախի դանդաղ մահն է, ինչպես այդ եղավ Նախիջևանում: Սակայն օրեցօր ամբոխի ոգևորության ալիքը փոխվում էր հիասթափության, որովհետև Մոսկվան այն անվանել էր ծայրահեղականների, ազգայնամուլների շարժում և սկսել անասելի հետապնդումներ ու կալանումներ:

Ծովացած ամբոխը օրեցօր ավելի էր խենթացած բռունցքվում, համոզվելով, որ նորից խաբված է: Եվ շարժման օրվանից ծնված կոչերից ու կարգախոսներից մնացել էին «միացում», «Հայաստան» սրբազան բառերը:

Եվ մի օր էլ արցախյան երկնքում հայտնվեցին հինգաստղանի կանաչ մետաղյա «ծիծեռնակները», բերելով կանաչ բերետավորներ ու գրահամեքենաներ, օղակելով Արցախը, որ ձայնը կոկորդում մնա: Բայց ճշացողին ինչպես էլ ճնշեն, միևնույն է, պիտի գոռա: Նրան կարող են սպանել, բայց ոչնչացնել՝ ոչ:

Մոսկվան սին խոստումներից ու բարբառաչանքներից հետո ծնեց ադրբեջանական ՕՄՕՆ-ը՝ Պիղատոսի նման լվանալով իր արյունոտ ձեռքերը: Իսկ վերջինս էլ շրջափակումին ավելացրեց սպանություններն ու մարդաորսը:

Մեռնողը լավ էր հիշում, որ իրեն էլ զինվորները գիշերը տնից տարան և դեռ Ծուշի չհասցրած՝ իսանձնեցին օսոճականների: Նրանցից մեկն էլ ավտոմատի փողը փորին սեղմելով՝ մոլտաց.

— Գյավուր, քեզնից փիթի պիտի սարքեմ:



Նա հոգևարքի մեջ կարծես դեռ շնչում էր սիրտ խառնող բանտահոտը, մարմնի վրա զգում առաջին անխնա ոտնահարվածները, բայց չէր հասկանում, թե ինչու ձեռքերն ու ոտքերը կապեցին և մեջքն էլ կիսաջարդ անելով, կոացրին ու ոտքերի օղակը անցկացրին վիզը: Եվ լեշահոտ ոտքահարվածների ցավից ավելի գունդ ու կծիկ դառնալով մոնչում էր նա, օգնության կանչում դռան ետևում կանգնած զինվորին, բայց իզուր: Հետո ծեծողները ոտքի հրումով շուռ տվեցին և սկսեցին էլի ոտնաջարդ անել:

— Գեստապոյականներ,— գոռում էր մարդը՝ այրող ցավից թուլանալով ու մտածելով, թե ինչու միայն կողքերին էին խփում:

Իսկ երբ առաջին օրը ծեծից հետո ուշքի եկավ, ոչ ոք չկար կողքին, բայց զգաց, որ էլի ետ ու առաջ քայլող զինվոր կա դռան ետևում, իսկ խցիկներից լսվում էին աղեկտուր գոռոցներ: Եվ օրական երեք անգամ նույն ժամերին, նույն եղանակով, մինչև ուշագնաց լինելը, ծեծում էին: Իսկ երբ սկսեց ցավից ջղաձգումով արյուն միզել, նոր հասկացավ, թե ինչու էին կապկպելով միայն կողքերին հարվածում: Թուրք գեստապոյականները շարքից հանել էին երիկամները:

Մեռնողի ուղեղում մեխված էր նաև այն պահը, երբ իրեն բուժման նպատակով Երևան տեղափոխելու համար պատգարակով մոտեցրին ինքնաթիռին, օմօնականներից մեկը, որը ոտից գլուխ լսիրշորեն ստուգում էր նաև Երևան մեկնող ու այնտեղից եկող աղջիկներին ու կանանց, ժանգոտ ժպիտով ավելացրեց.

— Գնացեք, մի օր էլ այնտեղ կհասնենք:

Մարդը թեև տանջվում էր հոգևարքի մեջ, բայց տենչում էր իր օջախում մեռնել, մեռնելուց առաջ լինել Ղարաբաղի անտառներում, տեսնել ֆիդայի ընկերոջը:

Մահամերձին շրջապատողներից ոչ մեկը չիմացավ, թե նրա սառչող շրթունքները վերջին անգամ ինչպես անլսելի արտաբերեցին՝ վրե՛ժ, վրե՛ժ, վրե՛ժ: Մահացողը հավատացած էր, որ Արցախը, վաղ թե ուշ, կփրկվի, քանի կան Գուրգենի նման տղաներ, բայց մտքովն անգամ չէր անցնում, որ Գուրգենը իր մահվան լուրը կարող էր այդքան շուտ իմանալ և թաղման օրն էլ կնոջը՝ Հասմիկին, ՕՄՕՆ-ի կողմից արքանված Արցախից ցավակցական նամակ հասցնել, որն էլ թաղման օրը ընթերցվեց որպես դամբանական:

«Էդիկ ջան,— գրել էր Գուրգենը,— մենք մեզ բախտավոր էինք համարում, որ գտել էինք իրար, քանզի մեր կեղծ և անազնիվ հասարակության մեջ իսկական ընկեր գտնելը, համոզված եմ, քչերին է հաջողվում: Մեր քառասուն տարվա ընկերությունը եղբայրության էինք վերածել, համարյա ամեն օր իրար հանդիպելը բնական պահանջ էինք դարձրել, որ մեր ընտանիքները մեզ չսփ մտերմացրել էինք իրար: Հազարավոր ժամեր էինք անցկացրել ուրախության ու տխրության սեղանների շուրջ, հասել աշխարհընկալման ընդհանրության, ուրախացել մեր ընտանիքների հաջողություններով, վշտացել դառնություններով: Ականջումս եմ քո զվարթություն բերող հումորը, լիաթոք ծիծաղը, Հասմիկի կախարդական երգն ու պարը, անասիման կենսասիրությունը: Թվում էր, թե հենց այդպես էլ պիտի շարունակվեր ընդմիջտ: Սակայն... Սակայն որքան էլ այն երկար տներ, մենք այն երկար ու լիակատար երջանկություն չէինք համարի, քանզի որ կարոտած ընկերների համար ժամանակի միավոր դարձած դարը պետք է չափվեր մեր Ղարաբաղի ազատությամբ: Մենք երջանիկ չէինք, խաբուսիկ էր ամեն ինչ, մեր գերի հայրենիքում:

Հիշողությանս մեջ մեխված է ձմռան այն սաստիկ գիշերը, որ սովետական զինվորից ու ՕՄՕՆ-ից փրկելու համար քեզ ճանապարհեցինք Հայաստան: Սակայն չանցած մի ամիս նորից վերադարձար և գրկելով ինձ ասացիր՝ «Առանց Ղարաբաղի չեմ կարող ապրել»: Թող մայր Հայաստանի հողը վրադ թեթև լինի, թող շիրիմդ ոխատատեղ դառնա, որ մի օր գամ ու ականջիդ շջնջամ. «Էդիկ ջան, փափագդ կատարված է, վրեժդ ի կատար ածված»:

Հրածեշտ քեզ, իմ սիրելի ընկեր: Դու անմահ ես և կմնաս անմահ, քանի կա և կլինի մորը գտած Արցախը»:

Ընթերցողը թեև թրթռուն ձայնով շարունակում էր կարդալ նամակը, բայց արդեն նրա ձայնը չէր լսվում աղեկտուր հեկեկոցների մեջ:

1990 թ.

Երբ սկսվեց Մեծ հայրենականը, ես դեռ հոկտեմբերիկ էի: Տրակտորիստ հորս էլ զինվորագրեցին:

Սեպտեմբեր ամսվա վերջին օրերին մեր քաղաքում իրանցում սկսվեց: Ամենուր լսվում էր որոտ ու ինքնաթիռների հոնդյուն:

Մեր ուսուցչուհին՝ Լարիսա Իվանովնան, որը դասերի ժամանակ հաճախ կրկնում էր, թե՛ «շուտով մեր անպարտելի բանակը գերմանացիներին կշախջախի իր որջում», մեզ նման դողում էր: Սակայն թրթռացող ձայնը խեղդելով՝ ներկա-բացակա արեց: Ոչ ոք ձեռք չբարձրացրեց դասը պատմելու, որովհետև պատուհանների ապակիները ուժեղ զնգզնգում էին դպրոցի վրայով թռչող ինքնաթիռների հոնդյունից և սարսափ տարածում դասարանում:

Հանկարծ լսվեցին խուլ դղրդյուններ և նույնիսկ երերացին դասասենյակի պատերը:

Լարիսա Իվանովնան նետվեց դեպի պատուհանը և, ձեռքերը տարածելով, գոչեց.

— Աստված իմ, քաղաքը ոմբակոծո՞ւմ են:

Դասարանը շրջապատեց գունատված ուսուցչուհուն: Ես պատուհանից տեսա հեռվում բարձրացող ծխի ու կրակի քուլաներ:

— Տագնա՛պ, տագնա՛պ,— հանկարծ հնչեց դպրոցի բարձրախոսում:

— Դեպի ոմբապատարան, արա՛գ, արա՛գ,— սթափվեց ուսուցչուհին:

Մենք վախվորած իջանք շորրորդ հարկի աստիճաններով, մեր հետևից էլ՝ Լարիսա Իվանովնան:

Դպրոցի խոնավ ու մութ նկուղային հարկը կոչվում էր ումբապատարան, մի անգամ ցույց էին տվել ու ասել՝ «Եթե տագնապ հայտարարվի, կհավաքվեք այստեղ»:

Ռմբապատարանում ամեն դասարան իր տեղն ուներ: Երբ մենք բոլորվել էինք մեր ուսուցչուհու շուրջը, նա դողդողացող ձայնով ասաց.

— Երեխաներ, չվախենաք, մեր հայր Ստալինը թույլ չի տա, որ մեր գեղեցիկ Կիևը քարոքանդ անեն, սպանեն մեզ:

Թե էլ ինչ ասաց Լարիսա Իվանովնան, չլսեցի, որովհետև մոմերով լուսավորվող, կիսամութ ոմբապատարանում աղմուկ էր, բվվոց:

Մեկ-մեկ ավելի բարձր էին հնչում դպրոցականներին սաստող ուսուցիչների ձայները:

Իսկ Լարիսա Իվանովնան, որ լուել էր, նորից սկսեց թրթռացող ձայնով փառաբանական խոսքեր ասել մեր բանակի մասին, հուսադրել մեզ:

Տագնապի ավարտից հետո ցրվեցինք մեր տները:

Իսկ առավոտյան մայրս ասաց, որ քաղաքը գերմանացիները գրավել են և չթողեց իջնեմ բակ:

Առաջին անգամ պատուհանից նկատեցի կեռխաչ տարրերանշանով տանկեր, զինվորներ:

Մի անձրևոտ օր էլ, երբ պատուհանից դուրս էի նայում, տեսա, որ մեր բակը շրջապատված է գերմանական զինվորներով: Իսկ մի տանկ էլ քարածայրի նման տնկվել էր բակում:

Ես դեռ չէի հասցրել տեսածիս մասին հայտնել մորս, երբ ուժեղ հարվածներից մեր դուռը երերաց: Մայրս վազելվազ մոտեցավ դռանը ու բացեց:

Երկու գերմանացի զինվոր, ալտոմատները սեղմած կրծքներից, ներս խցկվեցին: Վախից կպա մորս: Նրանք մեզ ուշադրություն չդարձնելով ստուգեցին սենյակները, վարագույրների հետևը, մահճակալների տակը, լողասենյակը: Տեղաշորերն էլ տակնուվրա անելուց հետո, ձեռքի շարժումներով մեզ հասկացրին, որ իջնենք բակ: Ծեռքի բնակիչներին, մեծ թե փոքր, դուրս էին անում տներից: Ես էլ մորս ձեռքից պինդ բռնած մյուսների նման կանգնել էի բակում, երբ երկրորդ հարկի պատշգամբից մի երիտասարդ նետվեց ու փորձեց փախչել: Չորս կողմից տըկտըկացին ալտոմատները, և փախչողը դեռ երկու ցատկ չարած, ընկավ մեշքի վրա: Տանկի մոտ կանգնած սպան, արհամարհանք արտահայտող կեցվածքով մոտեցավ ընկածին, ոտքով հրեց թեքված գլուխը, հետո էլ մոտենալով տանկին, սկսեց ընդհատումներով խոսել: Իսկ քաղաքացիական հագուստով մարդը անձրևանոցը պահելով սպայի գլխավերևում, թարգմանում էր նրա հրամանը, թե չենթարկվողները կգնդակահարվեն տեղում: Թեև ես լսում էի, բայց մորս կպած ու դողալով աչքս չէի կտրում սպան-

վածից, որի արյունը խառնվելով անձրեաշրին, հոսում էր դեպի մեզ:

Հետո սպան չգիտեմ էլ ինչ ասաց, ձեռքը սրի պես տնկելով, երբ տանկը հոնդաց և թանձր ծուխ անելով շարժվեց դեպի ընկածը: Մեկ էլ այն տեսա, որ մահացածը տանկի թրթուրների տակ է: Վախից ճչալով, փարվեցի մորս ու էլ ոչինչ չտեսա: Ուշքի եկա անկողնում: Մայրս չէր թողնում վեր կենամ, ես էլ ստիպում էի կողքիցս շնեռանա: Աչքերս հենց փակում էի, տանկն էի տեսնում... Իսկ գիշերները վեր էի թռչում վախ քերոդ երազներից: Մայրս էլ (իր անկողնում էր քնեցնում) հորդորում էր, որ չվախեմ: Օրեր հետո իմացա, որ դասերը վերսկսվել են, բայց ես դեռ վախեցնում էի տնից դուրս գալ, թեև մայրս համոզում էր չվախեմ, որ իբրև գերմանացիները սպանում են միայն պարտիզաններին: Իսկ ես ամեն անգամ պնդում էի, որ դասի չեմ գնա, մինչև գերմանացիներին դուրս չանեն քաղաքից:

Երբ մեկ-մեկ կանգնում էի հայելու առաջ, վախեցնում էի ինքս ինձանից: Դեմքս գունատ էր, այտուկորներս դուրս ցցված, աչքերիս տակը՝ կապտագույն ու փոս ընկած:

Մի անգամ էլ մայրս ուսուցչուհու ճամփելիս գանգատվում էր, թե չեմ կազդուրվում: Իսկ Լարիսա Իվանովնան համոզում էր, որ վախը կանցնի և ամեն ինչ լավ կլինի:

Հունվարյան արձակուրդներից հետո Լարիսա Իվանովնան մորս հետ ինձ համոզեց և ձեռքիցս բռնած դպրոց տարավ: Դրանից հետո սկսեցի մեծակ հաճախել: Երեք տարի հետո քաղաքը նորից սկսեցին ոմբակոծել, բայց այս անգամ չէինք վախեցնում, գիտեինք, որ մեր բանակն է գալիս:

Նոյեմբեր ամսվա առաջին օրերին էր, որ քաղաքը ազատագրվեց: Այն կարծես արթնացել, կենդանացել էր: Մարդիկ արդեն ժպտում էին, երգում, իսկ մեր ուսուցչուհին էլի սկսել էր փառաբանել իմաստուն, հանճարեղ պողպատ Ստալինին, մեր անպարտելի բանակին:

Մի օր էլ մեր տուն եկավ սևորակ, խոշոր աչքերով, թիկնեղ մի գինվոր: Երբ նա մզդակած, շերտածե, մինչև ծոծրակը ծածկող գլխարկը հանեց, տեսա նրա խոիվ գանգուրները: Մեր դասարանում մի տղա էլ կար, Յուրա անունով, նրա մազերն էլ էին այդպես սև ու գանգուր, որին գերմանացիները սպանել էին փամ-

փուշտ գողանալիս: Գրիգորին, այդպես էր մեր տուն եկած տանկիստ գինվորի անունը, հեռակա գիտեիք: Հորս հետ ծանոթացել էին դեռ 1940 թվականին, Մոսկվայում, հարվածային տրակտորիստների հավաքում: Եվ մինչև պատերազմը սկսվելը իրար հետ անմակադրական կապ ունեին:

Երբ տանկիստը հարցրեց հորս մասին, մայրս բերեց զարդատուփը, որտեղ պահվում էր նրա ռազմաճակատից ուղարկված լուսանկարները, եռանկյունի անմակները և սև թուղթը: Նա անյելով հորս սև թղթին, գլուխը լուռ տարուբերեց ու հոգոց հանելով ասաց.

— Մի բուպեով եմ այցելել, գորքը շարժվում է, կուշանամ:

Եվ թախծոտ ժպիտով մերժելով մորս առարկությունները, ուսապարկի մեջ եղած-չեղածը՝ հացը, պահածոները, շաքարը, դարսեց սեղանին ու գնաց:

Անցան տարիներ... Պատերազմը ավարտվել էր: Ես հասունության ատեստատ ստանալուց հետո փոխարինել էի մորս, գործարանում էի աշխատում: Իմ հոգսը միայն նրա առողջությունն էր, որ հորս սև թուղթը ստանալու օրից հյուծվել էր ու չէր կազդուրվում:

Մի օր էլ, երբ հորս խուճացած անմակներն էի վերընթերցում, մայրս առաջարկեց հորս ծանոթի՝ Գրիգորի երկու-երեք անմակներն էլ կարդալ, որը գրել էր հորս՝ պատերազմից առաջ: Ծատ անկեղծ, սրտաբուխ անմակներ էին: Ամեն անմակում հորս հյուր էր կանչում, իրենց գյուղը անվանելով դրախտ:

Եվ մորս հետ խորհրդակցելով անմակ գրեցի իմանալու, թե հորս ծանոթը, որ լավ տպավորություն էր թողել, արդյոք ո՞րք է:

Ամառը նոր էր կիսվել, երբ անմակիս պատասխանի փոխարեն եկավ ինքը՝ Գրիգոր քեռին, կնոջ՝ Սոնյա մորաքրոջ և տղայի՝ Վարշամի հետ: Նրանց բերած արևաբույր կարմիր գինին խմում էինք, կատակում, ծիծաղում: Վարշամը կարծես երիտասարդացած հայրն էր, խոշոր ու փայլող աչքերով ու զանգուրներով, գողունի նայելով, հիշում էի իմ դասընկերոջը՝ Յուրային: Իսկ երբ խոսք բացվեց մորս առողջության մասին և Գրիգոր քեռին իմացավ, որ բժիշկները խորհուրդ են տվել կլիմայափոխվել, նա թուղթ ու գրիչ վերցրեց, հագավ ակնոցները և լուրջ տեսք ընդունելով ինչ-որ բան գրեց ու հետո էլ շեշտված կարդաց.



«Քաղաքացուհի Նաստյա Շեչեճկովային և նրա դուստր Տանյային առանց հապաղման ուղարկել արևաշատ Գետաշեն բուժ-Առողջապահության միևնույն Գրիգոր Մեխակյան»:

վելու:

Եվ իմ հորդորով, մի քանի օր հետո մորս համոզեցինք ու ճանապարհ ընկանք: Ուշ երեկո էր, որ մտանք Գետաշեն: Զորի մեջ, գետակով կիսված գյուղը մթության մեջ էր:

— Տեսա՞ր մեր մեծ Դնեպրը,— շշուկով կատակեց Վարշամը, երբ արդեն կիսամութ, խաչվող ու գառիվայր փողոցներով՝ իրար վրա հեճված տների ու ցանկապատների արանքներով բարձրանում էինք:

— Տեսա, տեսա,— ես էլ շշուկով խոսեցի, որ չխանգարեմ գյուղի մասին խոսող Գրիգոր քեռուն:

Հասնելով գյուղի ամենաձայրի երկհարկանի, մեծ այգի ունեցող տանը, Գրիգոր քեռին կանչեց հարևանին, որ բանալին լերի:

— Սա էլ մեր թագավորությունը,— ասաց նա, երբ մտանք բակը:

Մորս հետ տեղավորվեցինք երկրորդ հարկի հարմարավետ սենյակներից մեկում: Առավոտյան մոտենալով պատուհանին, տեսա փոված այգիներ, անտառապատ լանջեր, որոնք կարծես հյուսված էին կապույտ երկնակամարին: Մի օր էլ Վարշամի հետ գնացինք այգիները շրջելու, մոռ ուտելու: Ամենուր ծառ ու ծաղիկ էին, այգիներ, անտառ: «Իրոք, դրախտ է»,— համոզում էի ինքս ինձ:

Վարշամը ինձ հատապտուղներ հյուրասիրելով պատմում էր գյուղի մասին, ասելով, որ այն ունի խաչքարերով շատ հին գերեզման, սուրբ Աստվածածին եկեղեցի, սուրբ Նշան անվամբ մատուռ, Եղնասարի վանք, 1749 արձանագրություն ունեցող քանդված եկեղեցի: Նա թվարկում, խոսում էր գյուղի պատմական հուշարձանների, գյուղից երեք կիլոմետր հեռու ինչ-որ բնակերտ կապույտ լճի մասին, իսկ իմ աչքերի մեջ մեր քաղաքն էր, մեր տունը:

Հաջորդ առավոտյան Սոնյա մորաքրոջը խնդրեցի կով կթել ինձ սովորեցնի: Եվ երկու օր հետո արդեն ես էի կովը կթում ու հաճույք ստանում, նամանավանդ, երբ տաք ու փափուկ պտուկ-

Անրից խաշվող շատրվանների նման, կաթը տծոցով լցվում ու փրփրվում էր դուլի մեջ, իսկ պինդ ու տոռոզ կուրծքը հետզհետե փափկում էր ու փոքրանում:

Համագյուղացիները կարծես հերթի էին դրել և համարյա ամեն երեկո մեզ հյուր էին կանչում: Ինձ թվում էր, թե ամբողջ գյուղը իրար բարեկամ են, ազգակիցներ:

Օրերի հետ ես սիրահարվում էի գյուղին, մարդկանց, մանավանդ, որ մայրս իրեն լավ էր զգում: Մի օր էլ Սոնյա մորաքույրը, որն արդեն ինձ «աղջիկս» էր ասում, անսպասելի առաջարկեց դառնալ իր հարսը: Մի քանի օր առաջ Վարշամն էլ էր առաջարկություն արել, մայրն էր հորդորել: Օրեր հետո համաձայնություն տվեցի, երբ մայրս խոստացավ, որ ինքն էլ կտեղափոխվի, մե՜նակ չի թողնի ինձ: Իսկ Սոնյա մորաքույրը ստիպում էր մորս, թե «Հետո-մետո չկա, գնում ես ձեր քաղաքում ո՞ւմ պահես»:

Աշնան երկրորդ ամիսն էր: Աննկարագրելի հարսանիք եղավ: Բերքառատ տնամերձ այգու ծառերի երկայնքով, զուգահեռ սեղանների շարք էր, ուտելիքներով ու տնական խմիչքներով լեփլեցուն: Կարծես ողջ գյուղը, մե՛ծ ու փոքր, եկել էին մեր հարսանիքին: Ինձ համար ավելի զարմանալին այն էր, որ ամբողջ գիշեր նվագեցին, կերան, խմեցին, երգեցին, պարեցին, բայց ոչ անսխորժություն տեսա, ոչ էլ հարբած մարդ: Ինչքան խմում էին, այնքան ուրախ ու զվարթ էին դառնում, և մի մարդու նման ենթարկվում «թամադային»:

Հարսանիքից օրեր անց մայրս վերադարձավ Կին, իսկ երկու տարի հետո, ըստ պայմանավորվածության, ընդմիջտ տեղափոխվեց մեզ մոտ: Ես արդեն Արայիկ անունով տղա ունեի, հայերեն գրել, կարդալ գիտեի:

Տարիներն անցան աննկատ: Արայիկս մեծացավ, ամուսնացավ: Մորս մահվան տարին դեռ չէր լրացել, երբ Ստեփանակերտում մե՛ծ ցույց եղավ...

Արցախը միաբանվել, մայր Հայաստանին միանալ էր ուզում: Այդ օրերին ես հաճախ էի հիշում իմ առաջին ուսուցչուհուն՝ Լարիսա Իվանովնային, որը մի անգամ ազգերի մասին խոսելիս բարձր էր զնահատել հայերին, որպես հին մշակույթ ունեցող ժողովրդի, որ ինքը եղել էր Հայաստանում, հինավուրց քաղաք Երևանում, հեռու-հեռուից դիտել Բիբլիական Արարատ լեռը: Նա երևի չգիտեր, որ պատմական Արցախը մե՛ծ Հայաստանի գավառ-



Աերից մեկն էր եղել, որ լեւհնչյան հեղափոխությունից հետո, մասնատելով նվիրել են ադրբեջանցիներին, իսկ Արարատ լեռը Արևմտյան Հայաստանով, 1915 թվականին ցեղասպանությունից հետո, մնացել էր Թուրքիային: Գուցե ես էլ այդքան բան չիմանայի, եթե երեսունից ավելի տարիներ չապրեի հայերի մեջ, հայ ընտանիք չկազմեի, եթե չլինեի 1988 թիվը, ադրբեջանցիների կողմից հայկական մի շարք գյուղերի զավթումը, Մանաշիդի հերոսական պաշտպանությունը: Սակայն մտքովս երբեք չէր անցել, որ սովետական կոչված բանակը կարող է սպանել իր հողն ու ջուրը պահող, երկիրը շենացնող մարդուն, որը հավատալով վերակառուցման բարբառանքին, փորձում էր ուրիշի լծից ազատվել, կորցրածը հետ վերադարձնել:

Սպանել էին նաև ամուսնու, տղայիս ու հարսիս՝ այգիներում աշխատելիս: Կեսուրս էլ վշտին չդիմացավ: Մնացել էինք երեքով՝ ես, վեցամյա աղջիկ թոռնիկս ու անկողնում գամված կեսրայրս: Հազար երանի էի տալիս մորս, որ նոր վիշտը չտեսալ:

Իսկ Մոսկվայից եկած գեներալը գյուղում հայտարարեց, թե ոչ ոք չի կարող անհանգստացնել գետաշենցիներին, որ բանակը գյուղը շրջապատել է նրան պաշտպանելու հայ ու ադրբեջանցի ազգայնամուլներից, ծայրահեղականներից: Նրան չէինք հավատում, որովհետև մենք ծայրահեղականներ չունեինք, այլ ունեինք ինքնամոռաց պաշտպաններ: Եվ մեզ պաշտպանելու համար ինչու են գյուղը արքանել, մեզ սպանող, թալանող օմօնականներին էլ քսի տալիս: Սակայն մենք մեզ համոզում էինք, որ այդպես էլ կդիմանանք մինչև մի լույս կբացվի, որովհետև զորքն էր մեր մեջքը կոտրողը:

Մի մայիսյան օր էլ գյուղում սկսվեց իրարանցում, երևացին տանկեր, զրահագնացներ: Իսկ ուղղաթիռները զարհուրելի հորձույուններով համարյա տների կտուրներին քսվելով ու կրակելով սկսեցին ավելի սարսափ տարածել:

Մարդիկ, որը՝ երեխա, որը հագնելիք շորերը գրկած, որը կիսահագնված, գոռում-գոչումով դուրս էին գետվում վառվող ու ավերվող տներից, վազում դեպի գյուղամեջ, որովհետև «մարդասեր» զինվորականները բարձրախոսով շտապեցնում էին հեռանալ գյուղից: Թոռնիկիս գրկած չգիտեի ինչ անել, ինչ ասել

անկողնուն գամված, հայրենականից ստացած ու բացված վերքից տառապող սկեսրայրիս, երբ զրահագնացներից մեկը կանգ առավ մեր բակում: Ես վախից թոռնիկիս սեղմելով կրծքիս, թաքնըվեցի պատի ետևում: Երկու օմօճական ուրախ-ուրախ իջնելով, ինչ-որ բան ասացին զրահագնացից գլուխը հանած զինվորականին ու առաջացան:

Երբ համոզվեցի, որ նրանք տուն են մտել, թոռնիկիս բերանը ափովս փակած, որ ձայն չհանի, մոտեցա շեմին և գողունի նայեցի ներս: Սկեսրայրս, որ մեծ սենյակում էր պառկած, գոռում էր.

— Թլպատված շներ, դուք վաղուց էիք ուզում էս գյուղը թուրքի որջը դարձնել... Ես Գորբաշովի, նրա կուսակցության... ձեր ծծած կաթը...

Քոսակ ու ձևաձև գլխով օմօճականը, որ մյուս ընկերոջ նման թանկարժեք ու փոքր իրերն էր գրպաններն ու ծոցը լցնում, մոլտալով մոտեցավ մահճակալին, գիշատիչ աչքերը ոլորելով, ավտոմատի փողը ուղղեց կեսրայրիս: Ինձ թվում էր, թե փորձում է վախեցնելով լռեցնել, բայց երբ կարծես երազի մեջ լսեցի ավտոմատի կրակահերթը և կեսրայրս ընկավ կողքի, թոռնիկիս ավելի սեղմելով կրծքիս, խույս տալով զրահագնացից, նետվեցի դեպի փողոց, օգնություն գոռալով:

Փողոցում մի տանկ էր կանգնած, նրա կողքին էլ երկու զինվոր, որոնք հանգիստ ծխում էին ու զրուցում՝ ուշադրություն չդարձնելով նույնիսկ իմ ճչոցին, իմ աղերսանքին: Ուր նայում էի, հրդեհ էր, ավեր, դեպի գյուղամեջ վազող անօգնական ու վախից սարսափած աչքերով կանայք, երեխաներ, ծերեր:

Ես դեռ չէի հեռացել զինվորներից, երբ մեր գյուղի սոցիալիստական աշխատանքային հերոս, այգեգործ Մնացականյանը, արյունաթաթախ ու կաղալով, քարը պրկված ձեռքում մոտեցավ տանկին հեկված զինվորներին ու հևաց.

— Ինչո՞ւ սպանեցիք իմ որդուն, ինչո՞ւ ավերեցիք իմ տունը:

— Հրաման ենք կատարում, գնացեք ձեր Հայաստան, սա ձեր հողը չէ,— ասաց զինվորներից մեկը:

— Սա էլ է Հայաստան, հասկացե՛ք, մարդասպաններ:

Զինվորներից մեկը հրելով նրան, թքեց երեսին:

— Ախ դու ծախված,— գոռաց մարդը և քարը վերը պահած փորձեց մոտենալ:

Զիւնվորը ոտքով հարվածեց նրա փորիւն:

Վերջինս մի պահ չոքեց և օրորվելով կրկին ոտքի կանգնեց, քարը ափում սեղմած:

Զիւնվորները մի ցատկով բարձրացան տանկ և բաց դռնակից դեպի բույնը փախչող մկների նման՝ ներս խցկվեցին:

Երեխայի նման հոնգուր-հոնգուր լացող մարդն էլ փորձեց նրանց հետևից բարձրանալ, բայց տանկը հոնդալով, ծուխ ու փոշի անելով պտտվեց շուրջը և հեռացավ:

Քարը ձեռքին մարդու փոխարեն մի փոշեխառը մսագունդ տեսա:

Ես կարծես երագում տեսնում էի այն, ինչ տարիներ առաջ տեսել էի իմ հայրենի քաղաքում: Բայց ծածկել էի թոռնիկիս աչքերը, որ նա էլ չտեսնի:

1988 թվականի ամռան առավոտներից մեկն էր:

Նա դեռ անկողնում ալարկոտ հորանջում էր, երբ ականջին հասան բացականչություններ: «Տեսնես ո՞ր գործարանի բանվորներն են գնում թատերական հրապարակ»,— նորից հորանջեց նա՝ մտաբերելով այն օրերը, երբ ինքն էլ էր եղել այնտեղ, միշտ կանգնել ծովացած բազմության վերջում, մի ծառի տակ, սպասելով, թե ուր որ է միլիցիան կալմեջ կանի ցուցարարներին, իսկ ցույցի կազմակերպիչներին էլ կտանի ուր պետք է:

Սակայն միլիցիան չէր խառնվել, իսկ ժողովուրդը ժամ առ ժամ ծովացել էր:

Մի օր էլ հրապարակում հայտնվեցին հացադուլսավորներ, իսկ նստացույցի մասնակիցների շարքերը սովարացան:

Մինչև հորանջելով ու ծմրկտալով նա կմոտենար պատուհանին, արդեն ձայները հեռվից էին գալիս:

Եվ աչքերը պատուհանին հառած նա շարունակեց մտորել: Մի քանի օր առաջ ինքը, որպես «Ուսանող» սրճարանի մշտական հաճախորդ, նստած ունկնդրում էր կողքի սեղանակիցների զրույցը: Նրանք գտնում էին, որ Հայաստանը պիտի անկախանա, աշխարհի երեսից ջնջվի կոմունիստական կարմիր ֆաշիզմը, որը պոռնիկ կնոջ նման իրար դեմ է լարում պետություններին ու մարդկանց: Երկրորդ անգամ սուրճ պատվիրեց, որ երկար նստեր, ունկնդրեր զրույցը:

Զրուցակիցներից մեկն ասաց նաև, որ եթե ոչ այսօր, ապա վաղը ձեռքերը արյունով թաթախած այդ կուսակցությունը պետք է ծնկի գա, բայց մինչ այդ պիտի փրկել Ղարաբաղը, թե չէ հետո ուշ կլինի:

Իսկ մյուսը հավանություն տալով ընկերոջ կարծիքին, ավելացրեց, թե ժամանակին ո՞ւմ մտքով կանցներ, որ աշխարհասասան Հոռոմը կփլվեր և փլվեց ներսից, որովհետև ելիս էր: Այս կուսակցությունն էլ է այդ օրն ընկել:

Չորրորդ սեղանակիցը, որ մինչ այդ լուռ էր, հանկարծ սուրճի բաժակը շրխկոցով սեղանին դնելով ոգևորված ասաց.

— Տղերք, մեկ-մեկ էլ չխմե՞նք այս «պերեստրոյկա» կոչվածի կենացը, որ գոնե թույլ է տալիս ազատ խոսել:

Նա մեկ առ մեկ հիշում էր սրճարանում լսածը, մտովի ինքն էլ իր իմացածը գումարում, երևակայելով, որ զրուցում է անծանոթների հետ, արժանանում նրանց հավանությանը: «Իհարկե, ես էլ կարող եմ ճիշտ դատողություններ անել, Ղարաբաղը փրկելու ճիշտ ծրագրեր առաջարկել»: Նա գուցե դեռ երկար մնար անկողնում ու երազեր, եթե ստամոքսը տհաճ չճմլվեր և սրճարան գնալու պահանջ չզգար:

Մարդը կիսավա դուրս եկավ տնից, փափագելով, որ նորից սրճարանում կհանդիպի անծանոթներին, որոնց մտովի քաղաքագետներ էր անվանում, հետո նոր գաղափարներով հարըստացած կգնա հրապարակ, ուրիշների նման գլխին կհավաքի դեսից-դենից խոսողներին և նոր ծրագրերով կզարմացնի նրանց: Արդեն քանի օր էր, նա չէր սափրվում, ուզում էր մի գլխացավանքից էլ ազատվել, սովորական մարդկանցից տարբերվել, ուշադրություն գրավել:

Երբ մտամոլոր ներս մտավ ծխից մթնված սրճարանը, հայացքով չափեց, բայց չկային մի քանի օր առաջ իր տեսած «քաղաքագետները»:

Նա սուրճ պատվիրեց, արեց լսողությունը, փորձելով որսալ, թե որ սեղանի նստածներն են խոսում Ղարաբաղյան շարժման մասին: Եվ սուրճի բաժակը ձեռքին, ականջը՝ ձայնի, հուշիկ-հուշիկ անցավ սեղանների արանքով, թեև ազատ տեղեր շատ կային:

— Տղերք, սուրճը խմենք ու գնանք թատերական հրապարակ, ժամը երկուսին միտինգ է,— ասաց ծայրի սեղանի շուրջ նստած երեք երիտասարդներից մորուքավորը, որի փոքրիկ աչքերն ու քիթն էին հազիվ երևում մազակալած դեմքին:

— Հենց էս է որ կա,— ինքն իրեն մրմնջաց նա կանգնելով: Հետո մոտենալով մորուքավորին՝ ժպտալով կատակեց.

— Երեք հրացանակիրներ, չորրորդին չե՞ք ընդունի:

— Հինգերորդին էլ կընդունենք, միայն մեր նպատակին հասնենք:

— Հակոբ, ձեր խոնարհ ծառան,— ժպտալով ասաց նա և նստեց:

Փոխադարձ զրույցից պարզվեց, որ նրանց նպատակը Ղարաբաղը Հայաստանին միացնելն է, սոցիալիստական, բռնա-

պետության տապալումը, ստրկացված հայ ժողովրդին ազատություն բերելը:

Հակոբն ուշիմ լսում էր նրանց, ումպ-ումպ վայելում սուրճը: Մորուքավորը ծխախոտ առաջարկեց: Նա ծխախոտ վերցնելով՝ շնորհակալություն հայտնեց, վառեց սեղանին դրված կրակվանիչով և շարունակեց փստացնելով վայելել սուրճը, սպասելով, որ նոր ծանոթները կխոսեն նաև Հայաստանի անկախության մասին:

Բայց նրանց զրույցը հիմնականում հանգում էր Ղարաբաղը Հայաստանին միացնելու թեմային:

Հակոբը կրկին հիշեց «քաղաքագետներին», ժողովեց նրանցից լսած մտքերն ու հարմար պահը որսալով միջամտեց.

— Տղերք, իմ կարծիքով Հայաստանը պիտի անկախություն ձեռք բերի, գորք ստեղծի, որ կարողանա սատար կանգնել Ղարաբաղին: Սուսգայիթում եղեոն եղավ, Հայաստանը ի՞նչ կարող էր անել: Ախր, այս բռնակալ պետությունը մասդացի պես բռլորիս կաղա, կուտի, վրեն էլ...

Նա ուզում էր ասել, մի բաժակ ջուր էլ վրան կխմի, ինչպես օրեր առաջ լսել էր սրճարանում, չասաց, որ կիսատ թողած խոսքը ավելի տպավորիչ լինի:

Իսկ երբ մորուքավորը հարցրեց, թե Հայաստանը ինչպե՞ս կարող է այս մասդաց պետության մեջ անկախանալ, նա մեկնաբանեց այնպես, ինչպես լսել էր «քաղաքագետներից», ավելացնելով նաև, որ վաղ թե ուշ բոլոր հանրապետությունները կգնան դեպի անկախություն, Հայաստանն էլ կհետևի նրանց օրինակին: Հետո էլ շեշտեց վաղուց, շատ վաղուց լսածը, թե «հայերը հեղափոխական ժողովուրդ են»:

Հակոբի դեմքը ոգևորությունից պայծառացել էր, որ ասածները հավանության են արժանացել: Սակայն վախենում էր, որ հանկարծ իրեն դիմեին՝ «իսկ ինչպիսի վախճան կունենա Ղարաբաղյան շարժումը, եթե Հայաստանը նրան սատար կանգնի միայն անկախություն ստանալուց ու հզորանալուց հետո»:

Այդ հարցը «քաղաքագետները» այն օրը չէին շոշափել:

— Այսպե՛ս,— ժամացույցին նայելով ծլպացրեց մորուքավորը, հասկացնելով, որ վեր կենալու ժամն է:

Հակոբը դատարկ բաժակը մի կողմ հրեց, գոհ ու ժպտադեմ

վեր կացավ, որ հարց չսովեցին, և ինքն ավելի փայլուն մտքեր արտահայտեց, քան նրանք:

— Հակոբ, դո՞ւք էլ եք գալիս հրապարակ,— ասաց իրեն ավելի մոտիկ կանգնածը:

Մինչ նա կպատասխաներ, հանկարծ մորուքավորը մատը մտասնեռ դնելով ճակատին, կրկնեց.

— Հակոբ, Հակոբ, ո՞նց որ...

Իրոք, պարզվեց, որ մորուքավորը՝ Արտոն, ծանոթ էր Հակոբին համալսարանական տարիներից:

Հակոբը սովորում էր երկրաբանության, իսկ Արտոն՝ մաթեմատիկայի ֆակուլտետում:

— Աստվածային խորհուրդ կա, հայրենիքի ճակատագրական պահերին բարեկամները հանդիպում են իրար,— գլուխն օրորեց Արտոն՝ ձեռքը բարեկամաբար դնելով նրա ուսին:

Նա մեղադրում էր Հակոբին, որ իրեն չէր հիշել, իսկ վերջինս էլ կատակել էր՝ արջի ես նմանվում, ո՞նց ճանաչեի:

Նրանք, հիշելով ուսանողական տարիների արկածները, մոտեցան թատերական հրապարակին, որը ծովացած էր ցույցի եկած ամբոխով, իսկ նրանց գլխավերևում փողփողում էին պատառները՝ Սուրբայիթի եղեռնագործությանը, կուսակցությանը, Մոսկվային դատապարտող կարգախոսներով:

Արտոն, Հակոբին թևանցուկ, մարդկանց արանքներով մոտեցավ Թումանյանի արձանի պատվանդանի հովհարանման ծածկոցի տակ, կոշտ ներքնակին նստած հացադուլավորին, որոնց կողքին միայն ջրի շշեր էին, թերթեր, բրոշյուրներ, ամսագրեր և մոմեր: Արտոն և հացադուլավորը համբուրվեցին:

Հակոբի սոված ստամոքսի տհաճ զգացմանը մի բաժակ սուրճը չէր օգնել, գլուխն էլ պտտվում էր:

Նա, դեռ ճանապարհին լսելով Արտոնի հացադուլավոր ընկերոջ մասին, որի անունը արդեն դուրս էր եկել Հայաստանի սահմաններից, ինքն էլ էր որոշել հացադուլի նստել, անուն հանել, բայց նկատելով նստացույցի մասնակիցների սովարացումը, որոնցից ոմանք այդ պահին վայելում էին հաց, երշիկ, պանիր, շշով էլ խմում հանքային ջուր, լիմոնադ, միտքը փոխեց, ինքն իրեն ասելով՝ «Ձե, սոված չեմ դիմանա, նստացույցը ավելի լավ է»:



Նա գիտեր, որ Աստացույցի մասնակիցների ունեւորը պակաս էր լինում:

Աստիճանների վերևի հարթակում քնապարկեր, ծածկոցներ կային դարաված:

«Ըհը, քնել էլ կարելի է»:

Նա դեռ մտորումների մեջ էր, երբ Արտոն Արան տարավ Աստացույցի մասնակիցների մոտ և մի քանիսի ձեռքը սեղմելով ծանոթացրեց Հակոբին: Նստածներից երկուսը տաք-տաք վիճում էին Ղարաբաղը Հայաստանին միացնելու մասին:

— Տղերք, սպասեք, բանիմաց ընկեր եմ բերել, իրեն էլ լսեք,— ասաց Արտոն:

Վիճողները, մի պահ լռելով, իրենց արանքում տեղ բացեցին:

Հակոբը ժպտալով նայեց Արտոնին ու անսահման հրճվանք զգաց, որ ստացվեց այնպես, ինչպես ինքն էր ցանկանում: Հետո համարձակ նստեց իր համար բացված տեղը:

Պարզվեց, որ Արտոն էլ էր համարվում Աստացույցի մասնակից ու կազմակերպիչներից մեկը, բայց իր ասելով՝ անհետաձգելի գործերը ստիպում էին հաճախ բացակայել:

Հակոբն այդ գիշեր մնաց հրապարակում, մի երկու անգամ էլ ստամոքսը լցրեց և մինչև լույս զրուցեցին:

Նա միայն լուսադեմին աչքը փակեց, ներքին բավականությունամբ, որ իր շիմացած հարցերը շոշափվեցին զրույցում, տարբեր կարծիքներ հայտնվեցին, ինքը հարմար պահ ընտրելով, ձայնին էլ երանգ տալով, հանրահայտ թեզ էր շեշտել ու լռել, սպելի շահելով նոր ընկերների համախոհությունը:

Իսկ երբ երկու օր հետո կինը իմացավ, որ ամուսինը Արտացույցավորների մեջ է, դառը ժպտալով ինքն իրեն ասաց. «Հիմա էլ գլուխդ էդտեղ պահիր»:

Հակոբը սպասում էր, որ կինը կգա տեսության, իսկ վերջինս էլ՝ հակառակը:

Մի քանի օր հետո նոր ընկերները խորհուրդ տվեցին Հակոբին թերթերում, թոռուցիկներով հանդես գալ, խելոք մտքերը կոչ դարձնել, փակցնել ազատաշունչ բանաստեղծություններով զարդարված օպերայի պատերին: Բայց նա գլուխը օրորելով հրաժարվում էր, ասելով, թե իմն ասելն է, ով ուզում է, թող գրի:



Եվ գրեցին, իհարկե, շնորհակալով նաև նրա անուն, ազգանունը:

Հակոբն էլ չիմացավ, թե ինչպես ինքը աչքի ընկավ, անունը ժողովրդի բերանն ընկավ և ամեն նոր ցույցի եկածներից իրեն մատնացույց անողներ կային:

Սակայն մի օր էլ զինվորներ ու տանկեր եկան, հրապարակը մաքրեցին, և Հակոբն էլ ստիպված գնաց տուն, հույս ունենալով, որ կինը կարոտած կլինի, ուրիշների նման հիացմունքով կնայի իրեն, բայց ընդհակառակը, ձեռն առնելով ասաց.

— Էդ զինվորները որտեղի՞ց եկան, կարգին ապրում էիր:

— Ինչո՞ւ ես նվիրված, իրենց անձը մոռացած մարդկանց վիրավորում: Նրանք գիշեր-ցերեկ, սոված-ծարավ, քարն անկողին դարձրած պայքարում են, իսկ դու...

— Դու չկարծես, թե ես չեմ ցավում այդ սուրբ շարժման ճակատագրի համար: Բայց քեզ հո լավ եմ ճանաչում: Եթե բոլոր պայքարողները քեզ նման են, ուրեմն՝ վայ ենք տալու մեր գլխին:

Հակոբը ուզում էր արդարանալ, որ եթե ինքն էլ ուրիշների նման պաշտոն, փող ունենար, տուն տեղն էլ կարգին կպահեր, կինը այդպես չէր խոսի: Եվ վերջապես ինքը ինչով է մեղավոր, որ դիպումը գրպանումը, ամեն անգամ նոր պետեր են գլխին նշանակում, սակայն չասաց, որովհետև այդ մասին կնոջ հետ շատ էին վիճել, խոռվել, հաշտվել:

Անցան ամիսներ: Հակոբը մեկ-մեկ երևում էր երկրաբանական արշավախմբի գրասենյակում, ստանում աղքատիկ աշխատավարձը, սրճարանում հանդիպում Արտոյին, օրը մթնեցնում:

Մի օր էլ հրապարակը նորից լցվեց ցուցարարներով:

Իսկ մի անգամ ցույցի ժամանակ, Արտոն թեանցուկ անելով, նրան բարձրացրեց հարթակ: Հարթակում էր նաև Արտոյի նախկին հացադուլավոր ընկերը և Հակոբին առաջարկեցին միկրոֆոնով հանդես գալ:

Նա չէր սպասում նման պատասխանատու առաջարկության: Անակնկալի գալով հուզմունքից սկսեց դողդողալ, բայց գտավ, որ ավելի աչքի ընկնելու հարմար պահը չպետք է ձեռքից բաց թողնել: Եվ մինչև միկրոֆոնին մոտենալը, մի քանի անգամ այժմահազ տվեց, որ հուզմունքից խցանված կոկորդն ու խզված ձայնը բացվեն:

Եվ ելույթում խիստ խարազանեց կաշառակերությանը՝ իրեն վարկաբեկած կուսակցությանը, նրա հովանավորությանը՝ ղեկավարի աթոռ գրաված կաշառակեր քաջ նազարների, բերելով կոնկրետ փաստեր:

Իսկ ելույթը ավարտեց, բռունցքը օդում ճոճելով ու գոռալով՝ «Արցախը մերն է, միա՛ցո՛ւմ, միա՛ցո՛ւմ»:

Ծովացած ամբոխը բռունցքը վեր ցցած վանկարկում էր նրա հետ:

Նա, հաշոդությունից շացած, ուշ երեկոյան տուն եկավ, ոչինչ չասաց, բայց քունը չէր տանում, մտովի իրեն արդեն համարում էր դարաբաղյան շարժման լավագույն ակտիվիստներից մեկը: Հետո մտորումների մեջ կիսաննջելով դարձավ անկախություն ձեռք բերած Հայաստանի աշխարհաճանաչ ղեկավար, Ղարաբաղը միացրեց Հայաստանին:

Նա, ինչ մտածում էր մինչև քնելը, նույնը տեսնում էր նաև երագում, ուրախությունից արթնանում, նորից խոովված շարունակում երագել:

Իսկ մի օր էլ, երբ կինը հարցրեց, թե այդ ոնց է պատահել, որ միկրոֆոնը վստահել են իրեն, նա սառը ու վիրավորված տոնով պատասխանեց.

— Հետո կիմանա...

Իրոք, հետոն եկավ: Հայաստանի կառավարության գլուխ դարձան բանտի հոտը շնչած Ղարաբաղ կոմիտեի անդամները, շարժման ակտիվիստներից շատ-շատերը: Նոր ղեկավարների շարքերում էր նաև հացադուլավորը, որը կարգին պաշտոն մատուցեց իր ընկերոջը՝ Արտուշին, իսկ վերջինս էլ իր տեղակալ դարձրեց Հակոբին, ասելով. «Ամեն ինչի նորը, ընկերության հինը»:

Օրերի հետ ամեն ինչ փոխվում էր, կյանքը ծանրանում, թանկանում, Ղարաբաղն էլ հրի ու սովի մեջ ծվատվում, բայց կարծես ղեկավար դարձած հին ընկերներին այդ հիմնահարցերը չէին հետաքրքրում: Նրանց հետաքրքրում էր երևանյան փողոցներում սնկերի նման բազմացող խայտաբղետ կրպակների, սեղանների աճը, որոնց շուրջը բոլորում են դպրոցը լքած, շրթունքների մեջ ծամոն պայթեցնող պատանիները՝ «Հայաստան աշխարհի վաղվա հույսն ու ապավենները»:

Հակոբն այդ սեղանիկների տերերից գիշեր-ցերեկ հանգիստ չուներ, չէին թողնում ազատ շնչել: Սակայն շնչում էր, երբ շաբաթը մեկ անգամ պայմանավորված ժամին, ձևի համար, թղթապանակը թևի տակ մտնում էր իր շեֆի՝ Արտոյի աշխատասենյակը:

Վերջինս բարի ժպիտով, որը փայլում էր արդեն ամենօրյա աստիճակ էրեսին, ճոռոցով բացում է նախկին կուսակցությունից ժառանգած սեյֆը, ճոռոցով էլ փակում ու հիշում ուսանողական տարիները:

Հակոբն էլ էր հիշում, որ Արտոն թեև ուսանողական տարիներին տնից փող չէր ստանում, ոչ էլ թոշակ՝ քննությունները ժամանակին չհանձնելու համար, բայց միշտ գրպանում փող էր ունենում, նույնիսկ ուսանող տղաներին պարտք տալիս, հյուրասիրում: Ուսանողներից քչերը չգիտեին, որ աչքաբաց ու խաթրաշահ Արտոն բարի միջնորդ էր դասախոսների ու ուսանողների միջև:

Ամառային արձակուրդներին քաղաքից չէր բացակայում, ընդունելության քննությունների ժամանակ միջնորդ էր դառնում քննող դասախոսների, դիմորդների կամ էլ նրանց ծնողների միջև, ասելով՝ «Աստճո լավության դիմաց տվածը անաստվածությունն չէ»:

Իսկ հիմա էլ սեյֆը բացելիս ու փակելիս ասում է.

— Թալանչիներից վերցնելը ոչ անաստվածությունն է, ոչ էլ կաշտակերություն, ապրել է պետք:

Եվ ապրում էր նաև Հակոբը:

Կինն արդեն դարձել էր քնքուշ ու սիրալիր: Ամեն առավոտ առանց նախաճաշի ու համբույրի ամուսնուն տնից դուրս գալ չէր թողնում, ինչպես մեղրամիսի առաջին օրերին: Եվ մեկ-մեկ էլ ամուսնուն փսփսուքով հիշեցնում էր.

— Հետո կիմանաս...

1988—91 թթ.

### «ՎՏԱՆԳԱՎՈՐ ՄԱՐԳԸ»

Նրան ճանաչում էի ուսանողական տարիներից, ապրում էինք հանրակացարանի կից սենյակներում: Առավոտ երեկո, երբ հանդիպում էինք, երբեմն կատակում էր.

— Ախպեր, էսօր իմ գրպանում մկներ են վազվզում, քոնն ինչպե՞ս է:

Նա ինձնից էր հաճախ պարտք վերցնում:

— Ուսանողի նման,— փորձում էի ես էլ կատակել:

— Է՛, դու էլ մամայի բալա չես:

Չապահովված ուսանողներից շատերն ինձ նման գիշերային աշխատանք էին գտնում, հացի փող աշխատում, իսկ նա քսակ-մեկ էր խաղում: Այդ մասին հանրակացարանում քչերը գիտեին: Երբ պարտքերը մարում էր, գիտեի, որ կրել է, իսկ կրվելու դեպքում՝ թթվում էր: Երբեմն կշտամբում էի, որ վերջ տա այդ գըլ-խացավանք խաղին, բայց նա մեղմ ժպտում էր.

— Դու սուս, հարամ փողեր են, մենք էլ ուտենք:

Նա երկարավիզ ու նիհար տղա էր: Քայլելիս կռանում էր ու քայլերի հետ ուղտի նման գլուխը տնքտնքացնում: Ուսանողներից ոմանք էլ նրան ուղտ Գագո էին ասում, ոչ թե միայն կուզ քայլելու, այլ անոթի երկար դիմանալու համար: Բայց երբ ինչ որ առիթով հանրակացարանում սեղան էր գցվում, մի քանի մարդու չափ ուտում էր:

— Գագոն պահեստավորում է:

— Գագոն պատրաստվում է երկար ճանապարհորդության:

— Սահարա անապատ պիտի գնա,— ձեռ էին առնում տղաները, իսկ նա չէր նեղանում, շարունակում էր ուտել, կարծես կըշտանալ չուներ:

Ինստիտուտն ավարտելուց հետո նրան էլ չտեսա.

\* \* \*

1988 թվականի աշնանային օրերից մեկն էր: Ես էլ էի շտապում օպերայի հրապարակ, մասնակցելու համազգային ցույցին:

Հեռվից արդեն երևում էր հրապարակը: Ինձանից առաջ քայլողը՝ ձեռքերը խունացած ու ճմրթված ամառային վերարկուի

գրպանում, գնում էր կոսցած, կարծես զննում էր կոշիկները: Դիմացից եկող մարդը նրան կանգնեցրեց ու ծխախոտ խնդրեց: Հավասարվելով նրանց, ակամա նայեցի և դժվար չէր ճանաչել Գագիկին, որն արդեն ծերունու տեսք ուներ: Նոսր ու ճերմակած երկար մազերը, նիհար դեմքը՝ քթի նման երկարած, աղամախնձորն էլ ձողավզին ավելի դուրս պրծած: Կանգ առա ու ժպտալով բարևեցի:

— Ա՛հ, այդ դո՞ւ ես, բանի տարի է չենք հանդիպել,— ծոր տվեց նա:

Ծխախոտ խնդրողը կարծես դրան էր սպասում, իսկույն հենացավ:

Նա ինձ էլ ծխախոտ առաջարկեց:

— Գագիկ ո՞նց ես:

— Բոլորի նման:

Զրուցելով գնացինք, հեռվից նայելով ծովացած հրապարակին:

— Խելքդ ի՞նչ է կտրում, մի բանի կհասնենք,— ասաց նա, ծուխը դուրս փչելուց հետո:

— Ինչ էլ լինի, այս պետք է ժողովրդի ազատատենչ ոգին սրթուն պահելու համար:

Իսկ երբ իմացավ, որ ես էլ եմ շարժման ակտիվիստներից, հեզմական ժպտաց.

— Այդպես էլ գիտեի, ով գոռա, դու առջևում ես: Դա լավ չէ, վաթսուներկուին էլ առջևից քայլեցիր, ի՞նչ ստացար, ազգայնամոլի պիտակ: Բախտդ բերեց, թե չէ ինստիտուտից կվորնդեին, բանտի հաց էլ կուտեցնեին:

— Դե մի բանի ամիս կերա:

— Էն հե՛չ: Կապիկի ու ընկույզի պատմությունը գիտես չէ՞, առանց փորձելու կուլ չպիտի տաս: Ես էլ ծրագրեր ունեմ, բայց դեռ սպասում եմ:

Նա չասաց, թե այդ ինչ ծրագրեր են, ես էլ չհարցրի, հույս ունենալով, որ դեռ երկար պիտի գրուցենք: Բայց դեռ հրապարակ չհասած, ներողություն ասելով կանգ առավ, իբրև անհետաձգելի գործեր ունի:

Մի պահ մնացի ապշած, որ խուսափում է ցույցից և ակամա հարցրեցի.

— Մի՞թե ցույցի չես գալիս:

— Է՞, այդ հազարավորների մեջ իմ լինել-չլինելն ոչ կերե-  
վա, ոչ էլ մի բան կավելացնի:

Նա նորից ձեռքերը խոթեց կեղտից երիզված վերարկուի  
գրպանները ու ուղտի նման լնզլնգալով գնաց:

Անցավ ևս երկու փոթորկված տարի: «Ղարաքաղ կոմիտեն»  
հաղթեց: Համոզված էի, որ իմ և ընկերներիս տանջանքները, կո-  
մունիստների հարցաքննությունները հուշ կդառնան, բայց նոր  
իշխանություններին էլ դուր չեկավ տղաների գործը, արգելեցին  
մեր կողմից գեներ հայթայթելը, զինված ջոկատներ Արցախ ուղար-  
կելը, ասելով՝ «Ինչ պետք է, հիմա մենք ենք անում»:

Չենթարկվեցինք: Արցախին գեներ, կովող տղերք էին պետք,  
այլապես չէր դիմանա: Այդ որ պետությունն է, որ սիրում է իրեն  
չենթարկվող զինված ջոկատներին, անհատներին, հանգստացնում  
էինք ինքներս մեզ ու շարունակում մերը: Եվ մի գեղեցիկ գի-  
շեր, ինձ էլ բերման ենթարկեցին, մեղադրելով ապօրինի զեներ  
կրելու, պետությանը չենթարկվելու համար:

Մի քանի ամիս ինձ մեկուսարանում պահելուց հետո բաց  
թողեցին, ստորագրություն վերցնելով, որ տնից չբացակայեմ:  
Մեր տղաներից շատերին զինաթափ էին արել, ցրել, մի քանիսն  
էլ դեռ մեկուսարաններում էին, մեղադրվում էին ապօրինի զեներ  
կրելու, նոր պետությանը չենթարկվելու մեջ:

Ես վրդովված ու անտեսելով նոր քննիչիս հրահանգը, գնա-  
ցի Արցախ, այնտեղ ծանր վիրավորվեցի և պատահականությամբ  
կենդանի մնալով, վերադարձա կիսահաշմանդամ:

Մի երեկո հեռուստատեսությամբ հայտարարվեց, որ «Լույս»  
բարեգործական ընկերությունը Արցախի համար խնդրում է օգ-  
նություն: Եվ էկրանին մեծ թվերով նկարվեց հաշվի համարը:

Ինձ թվում էր, որ գիտեի Արցախում, Հայաստանում կազմա-  
կերպված բոլոր հասարակական, քաղաքական կազմակերպու-  
թյուններին, բարեգործական ընկերություններին: Ծառերի դեկա-  
վարներին անձամբ գիտեի, բայց այդ մեկը ինձ համար նորություն  
էր: Իմանալով այդ ընկերության հասցեն, հետաքրքրությունս ինձ  
տարավ այնտեղ: Ընկերությունը զբաղեցնում էր բնակելի շենքի  
կիսանկողնային հարկի երկու միջանցիկ սենյակ:

Քարտուղարուհին ասաց, որ նախագահը տեղում չէ, կլինի  
երեկոյան, իսկ երեկոն դեռ հեռու էր: Մտամոլոր դուրս եկա և  
ավտոբոսս նստեցի, որ տուն գնամ: Հետո տեղս զիջելով մի

ծերունու, տեղավորվեցի ավտոբուսի վերջում: Ուղևորները իրար հրելով բարձրանում էին, իրար սեղմվում, մի քանիսն էլ մնացին դռնից կախված: Նոր բարձրացած երկու ուղևոր ինձ սեղմված սկսեցին զրուցել: Նրանցից մեկը՝ փնթի հագնված, ջահել լողլողը համոզում էր հաճելի դեմքով տարեց զրուցակցին, որ անպայման փոխանցում կատարի «Լույս» բարեգործական ընկերությանը: Հետո թե էլ ինչ փափասցին, չլսեցի, բայց քիչ հետո լողլողը ակամա ձայնը բարձրացրեց.

— Չե՛ս հասկանում... քո ի՞նչ գործն է, ինչ են գրում, ոնց են գրում, դու քո փայի տերն ես: Ինչքան փոխանցես կեսը քոն՞ է: Ես երկու անգամ փոխանցում եմ կատարել:

Զրուցակիցը էլի ինչ որ բան ասաց:

— Այ տղա, ինչի հետևից ես ընկել, տասնյակ գյուղեր են ձեռքից ձեռք անցնում, արի հաստատիր, թե այդ ապրանքը, դրամական օգնությունը որտեղ է, վաղն էլ ինչ կլինի, աստված չգիտե: Խելք հավաքիր, խելք: Փող աշխատելու հարմար ժամանակ է, շունը տիրոջը չի ճանաչում:

— Գուցե հակառակը,— ժպտաց զրուցընկերը:

— Փիլիսոփայությունդ թող:

Տարեցը շշուկով էր խոսում, լողլողին էլ հաճախակի զգուշացնում, ձայնը բարձրացնելու համար:

— Է՛, համբերությունից հանեցիր, եթե այդպես չես ուզում, քեզ կձանոթացնեն մախագահի տեղակալի հետ, «տասներորդ» են ասում, գործարքները տասին խփելու համար, շատ «շուլլեր» է: Օգնության համար նվիրատվությամբ ձեռք բերված ապրանքները սրան-նրան է տալիս վաճառելու, դու էլ խանութ ունես, Լալայի գլխին կապիր: Հիմա ո՞վ է հարցնողը՝ որտեղից է, որտեղից չէ, քիզնես է,— համոզում էր լողլողը:

— Կմտածեմ:

— Հա, էնտեղ մի «բառադի» էլ կա, «ուղեղ» են ասում, նա է փորձում համը հանել, իբրև իրենց քիչ փայ է մնում:

Կիսաթեքված ավտոբուսը ճոճալով կանգ առավ, իջնողներ եղան, իսկ դռնից կախվածները, որ իջնողներին ճանապարհն տալու համար էին իջել, սկսեցին նորից բարձրանալ: Ես էլ մի կերպ առաջա, որ կամա թե ակամա չլսեմ քստմների զրույցը: Զգվանքով լսածս, ինձ հետ չպահեց ընկերությունում լինելու ցանկությունից: Երեկոյան նորից ընկերությունում



Էի: Երկար պիտի սպասեի, նիստ էր: Ուզում էի հեռանալ, մտովի անհիծելով թե՛ ընկերության և թե՛ նախագահի հերքը, երբ քառասունն անց զուրբագլուխ մի տղամարդ փնչացնելով ներս մտավ և նույնիսկ առանց քարտուղարուհուն նայելու, խցկվեց նախագահի աշխատասենյակը, դուռը թողնելով կիսաբաց: Ակամա նայեցի ներս մտնողի հետևից և տեսա գրասենյակի վերևում բազկաթոռում ընկղմվածին:

Աստված իմ, Գագիկն էր: Ես էլ զարմացա, որ իսկույն նա-  
նայեցի: Նրա դեմքը կտրացել էր, պայծառացել, քիթն էլ կար-  
ճացել: Իսկ իմ հարցին քարտուղարուհին պատասխանեց, որ  
իրոք նախագահը Գագիկն է: Նրան նորից խնդրեցի հայտնել,  
որ սպասողն իր ուսանողական ընկերներից է:

— Սպասեք, սպասեք, կարծես ձեզ նանայեցի, թեև հիմա  
մորուք չունեք, դուք ՀԱԲ-ի «Մաուզեր Բաթը» չե՞ք, Ձեր մասին  
շատ եմ լսել, մի անգամ էլ հեռուստատեսությամբ տեսել,— աշ-  
խուժացավ քարտուղարուհին:

Այդ ածական անունս երկու տարվա մեջ էր տարածվել: Առաջ  
իմ անձը նանաչողներից շատերն անգամ չգիտեին, որ «Մաուզեր  
Բաթը» ես եմ, միայն նոր իշխանությունների կողմից ինձ մեղա-  
դրանքներ առաջադրելուց, հեռուստացույցով էլ վարկաբեկելուց  
հետո հայտնի դարձա:

— Դե հիմա իրականում տեսեք և նախագահիդ էլ ասեք,  
գուցե և երկար սպասեցնել չտա:

Քարտուղարուհին ուրախ-ուրախ ներս մտնելով ու դուրս  
գալով, ժպտաց:

— Խնդրեմ:

Ներս մտա:

— Մ,— տեղից իսկույն ոտքի ելավ Գագիկն և առաջանա-  
լով սևիկեց սևոքս:

Նրան սպիտակ վերնաշապիկով ու փողկապով առաջին ան-  
գամն էի տեսնում:

— Պարոններ, ուսանողական նեղ օրերի ազիզ ընկերս է,  
լսած կլինեք ՀԱԲ-ի «Մաուզեր Բաթի» մասին: Հենց ինքն է, որ կա:

Ինձ նստեցրին նախագահի կողքի աթոռին: Աննկատ հա-  
յացքով զննեցի երկար սեղանի շուրջ նստածներին: Կարմիր փող-  
կապով, պնդուկանման փոքրիկ գլխով մարդը, որի աթոռը  
տրամադրել էին ինձ, անհանգիստ շարժում արեց և օձի սառը աչքե-



ըն հասնեց ինձ ու բարակ շրթունքները սեղմելով, ոտը-ոտըն գցեց:

«Գուցե նեղացել է, որ իր աթոռն ինձ տրամադրեցին»,— անցավ մտքովս: Գագիկն ինձ հարցուսիրձ էր անում, իսկ ես դեռ ավտորուսում լսածիս տպավորության տակ էի:

— Պարոններ,— ինձնից ներողություն չեմ խնդրելով, սեղում ուղղվեց նախագահը և շարունակեց նիստը: Ինչպես քիչ առաջ էի ասել, հարցին պիտի մոտենանք իմ ասած կտրվածքով: Մեզ ֆինանս է պետք, ֆինանս ունեցանք, գործ կունենանք, չէ՛ ջուր կծեծենք:

— Նախագահի կողմնորոշումը, գործելակերպը միանգամայն տրամաբանական է, ժամանակի շնչին էլ համապատասխան,— ռեպլիկ տվեց զուրբազուխը:

Նախագահողն ոգևորված շարունակեց.

— Այժմ ավելի կոնկրետ: Վաղն ի՞նչ օգնություն պիտի ուղարկենք Արցախ, պահեստում ի՞նչ կա, չկա, պարոն Արզոյան:

Արզոյանը զուրբազուխ ու փոքր մարմնով մարդն էր: Նա ոտքի կանգնելով շուտասելուկի նման ականջ ծակող ճղճղան ձայնով թվարկեց սննդամթերքների, հագուստների անվանումները:

— Տրանսպորտի հարցը նույնպես լուծված է, բոլոր փաստաթղթերը տեղը-տեղին լրացված,— ավելացրեց մորուքավոր արձանագրողի կողքին նստած մկան աչքերով ու դեմքով մարդը:

— Արձանագրության մեջ ավելացրեք նաև մեկ տոննա դեղորայք, մի քանի «յաշչիկ» ֆիլտրով ծխախոտ: Մի «յաշչիկում» քանի՞ տուփ է տեղավորվում:

Նստածներն իրար նայեցին:

— Լավ, մյուս «պարտիան» ուղարկելիս կհաշվենք, որ ամեն ինչ իր տեղն ընկնի,— հանդարտ ու համոզիչ տոնով ասաց նախագահը, նորից նայելով նեղաճակատ մարդուն, կարծես հայցում էր նրա հավանությունը:

— Գրեցի,— գլուխը տմբտմբացրեց արձանագրողը, ասիով շոյելով կիսաներմակած ու խոիվ մորուքը և բացելով թղթապանակը, նայեց նախագահողին:

Վերջինս «հասկացա» հայացքով թարթեց աչքերը:

— Թեև «տասներորդը» դեռ չկա, անցնենք դիմումների քննարկմանը,— նստածներին նորից հայացքով չափեց նախագահը:

Կրկին հիշեցի ավտորուսում լսածս ու ինքս ինձ հարցրի, ուրեմն՝ «տասներորդն» այստեղ չէ, իսկ նստածներից ո՞վ է «բանադին», գուցե՞ այս զուրբը:

Մորուքավորը ծանոթացնելով առաջին դիմումին ավելացրեց, որ երաշխավորված է:

— Ո՞վ է երաշխավորել,— ցածրաձայն հարցրեց նախագահողը:

— Ես,— ասաց նստածներից մեկը, ավելացնելով,— անձամբ նանաչում եմ:

— Հասցե-մասցե, ստորագրություն, կա՞, Խեչո:

— Խեչոն հո երեխա չի:

— Ինչքա՞ն,— նորից նախագահն էր:

— Դե հիմի փողն արժեք չունի, գուցե տասը հազար,— գրիչը տնկեց արձանագրողը:

— Տվեցի՞նք, երևի առարկող չկա,— թրի նման ձեռքը վրաբերեց նախագահը:

Կարդացվեց հաջորդի դիմումը:

Անցավ միաձայն:

Ականջիս միայն հազար-հազար բառերն էին հստակում:

Հետո կարծես երազում լսեցի ոգևորված նախագահին:

— Այժմ Արցախի «Ստատուս-քվոյի» հարցի մասին իր տեսակետը կհայտնի պարոն...

Նախագահը դադար տվեց և դարձավ ինձ.

— Սիրելիս, պարոն Դարբինյանը մեր ուղեղն է, պիտի ճանաչես, պատմաբան է, գիտական աստիճանով, բայց թողել է ամեն ինչ, զինվորագրվել Արցախի ազատագրման գործին:

— Ծանաչում եմ,— գլխով արեցի:

Ուրեմն՝ «բառադիմ» այս նեղճակատ, կարմիր փողկապ կրողն է: Տարիներ առաջ հեռուստացույցով մի քանի անգամ ելույթ էր ունեցել «Ազգերի եղբայրությունը մե՞ծ ընտանիքում», «Հայ ժողովրդի ստրկական վիճակը մինչ Հոկտեմբերյան մե՞ծ հեղափոխությունը» թեմաներով: Նա ելույթը միշտ սկսում էր «Լեհիցյան ճաճանչափայլ ուամունքի» նախաբանով, ավարտում կարմիր դրոշի փառաբանումով: Իսկ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին հիշատակելիս շեշտվում էր, որ ոչ միայն Հայաստանը մե՞ծ ընտանիքում, այլ նաև Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը՝ եղբայրական Ադրբեջանի գրկում, ալ դրոշի ներքո է ծաղկում ու փթթում, ինչպես մանուկը՝ մոր գրկում: Դաշնակներից էլ անվանում էր հայ ժողովրդի գերեզմանափորներ:

Դարբինյանը սառը աչքերը ճպճպացնելով ուրի կանգնեց  
և ձեռքերը հեցնելով սեղանին, ուռցրեց շրթունքները ու լրջախոհ  
հայացք ընդունելով ասաց.

— Պարոններ, այսօր Ղարաբաղի հարցը արծարծողները  
զբաղվում են միայն տրյուիզմով: Ցավոք, ոչ մեկը նոր տեսակետ,  
նոր տարբերակ չի առաջարկում:

Այսօր իմ ճանաչած քաղաքագետներ կոչվածները բոլորն էլ  
մարիոնետներ են, որոնք զբաղվում են միստիֆիկացիայով: Մեր  
ընկերությունը պետք է հեռու մնա տրյուիզմից: Մենք սնոր չենք  
եղել, չենք էլ լինի: Մենք պետք է լինենք նոր գաղափարախոսու-  
թյան էլիտան, ապոգեյը:

Նա այնպես էր ճամարտակում, կարծես Ղարաբաղի հարցն  
ինքն է լուծում:

Մեկ էլ հիշելով Ղարաբաղում կիսասոված, ծխախոտի փո-  
խարեն չոր տերև ծխող, կովող տղաներին, որոնց հետ մեկ տա-  
րի խրամատներում էի անցկացրել, հայացքով նորից չափեցի  
սեղանի շուրջը բոլորածներից և հանկարծ զայրույթի հեղձուկը  
հասավ կոկորդիս:

Հենց ուզում էի գոռալ՝ «Առնետներ», երբ թափով բացվեց դու-  
ռըն և օ՛ֆ անելով, աչքերն էլ պապղացնելով ներս մտավ միջա-  
հասակ, մի գնդիկ մարդ:

— Ահա և «տասներորդը», — ավելի պայծառացավ նախա-  
գահը, նայելով ինձ:

Ներս մտնողին նույնպես գիտեի: Ժամանակին մի քանի  
պաշտոններ էր վարել, կաշառակերության համար տեղից-տեղ  
սեղափոխվել:

«Ուրեմն՝ սա էլ «շուլերն» է:

Վերջինս, որ նույնիսկ առանց բարևելու թափով մտնեցել  
էր նախագահին ու ականջին փսփսում էր, իսկ նախագահի դեմ-  
քըն էլ ավելի էր պայծառանում, ես դուրս նետվեցի:

Երկար ժամանակ կանգառում հետ ու առաջ քայլեցի, ան-  
զորությունից գազազած:

Մեկ-մեկ էլ ուզում էի բարձր գոռալ, թե այս ինչ ևղալ: Բայց  
ով կլսեր իմ ձայնը, երբ նոր իշխանության համար էլ էի վտան-  
գավոր մարդ դարձել:

Միայն ավտոբուսից իջնելիս հիշեցի, որ առավոտյան վեր-  
ջին կոպեկները ժողովելով հանապազօրյա հաց էի գնել:

1988—1991 թթ.

Արդեն մեկ տարի էր անցել այն օրից, երբ սնկի պես բուսնող ավանհից առաջին արկն ընկավ հայկական գյուղում: Հինավուրց ու նորացած դրախտանման գյուղը օրեցօր կիսավերակ դարձավ, զոհեր ու տեղափոխվողներ եղան: Ռմբակոծության ժամանակ մարդիկ պատուպարվում էին նկուղներում, գետնափոր թաքստոցներում: Բոլորից հարգված, ծերության տարիքն էլ ուսած պատշար Մոսունց Ներսեսը գյուղից նույնպես չէր հեռացել: Նա թաքստոց էլ չէր մտնում և բոլորի համար մի պատասխան ուներ. «Թորքն հինչա՞, վեր վիսենամ, Տիգրանիս մատաղ»:

Տիգրանը գյուղի ինքնապաշտպանության ջոկատի հրամանատարն էր: Վերջինս էլ էր փորձել պապին բացատրել, համոզել, տնեցիների հետ թաքստոցը մտնի, որ ոռուսի թնդանոթը թուրք, հայ չի ճանաչում, բայց ծերունին ձեռքն արհամարհական թափ տալով ասել էր.

— Ա խոխա, էդ թոփշիները էն սապուն օտող, ցուան թորքերը չը՞ն, ես տրանց տակոեն...

Եվ կրկին հիշել Հայրենականի օրերին իր հետ ծառայող ադրբեջանցիներին, որոնք օճառ էին ուտում, իրար ձեռք ու ոտք վիրավորում, որ թիկունք ընկնեն: Իսկ մի անգամ էլ ձեռնամարտի պահին հրացանները նետել ու փախել էին՝ ալլահ, ալլահ գոռալով:

\* \* \*

Այդ օրը ծերունին իր տան դարպասի առաջ՝ մեծ քարին նստած, թագբեհը քաշելով «խեր ու շառ» էր ասում, երբ երևաց Տիգրանը՝ որսորդական հրացանը ուսած, մի կով, հորթն ու մի բուսի ոչխար էլ հետևից:

— Պապ, դարպասը բաց, բա ես կթողնեմ, որ դու առանց կաթի ու մածնի մնաս:

— Էս հումըն՞ն, ա խոխա,— խեթ նայեց պապը:

— Մերը, պապ:

— Մերը էտ անաղուհաց թորքերը տարան վե՞չ, ես տրանց...

— Դե, ես էլ նրանց նման արեցի, ասացի դարպասը բաց:

— Վա՛՛, վա՛՛, վա՛՛, ա լակուտ, էս տանը հարամ պան...

— Այ պապ, հարամ-մարամ չգիտեմ: Նրանք մեզ թալանում են, սպանում, իսկ դու... չես բացում, ես կբացեմ:

Տիգրանը երկփողանին դեպի մեջքը հրելով՝ դարպասը բացեց, բայց պապը տնքտնքալով, ձեռնափայտն էլ գետնին հեռելով կանգնեց ու մոռնաց:

— Ասացի էս տանը հարամ պան պետք չի, ուսդ քաշի... Թողը նույնպես ձայնը բարձրացրեց:

— Դե գնա արկի բերանն ընկած հարսիդ, որք ու սոված ծոռներիդ էլ հասկացրու, որ հարամա: Ախր, թալանողին պիտի թալանես, սպանողին էլ սպանես, այլ ոչ թե երեսդ շուռ տաս, որ մյուս կողմին էլ շմփացնեն:

— Է՛, ասացի ուսդ քաշի,— ձայնը նորից երկարացրեց պապը, և վեր տնկած ձեռնափայտը իջեցրեց դեպի բաց դարպասը եկող կովի ճակատին:

Կովը փնչացրեց, թափահարեց գլուխը և հետ դարձավ, հորթըն էլ հետևից:

— Խեղճ հայվան...— դողաց ծերունու ձայնը:

— Հիմի ի՞նչ անեմ, այ պապ,— վրդովված խոսեց թողը:

— Կորցրու:

Երբ թողը, չգիտես ում վրա զայրացած, անասուններն էլ առաջն արած գնաց դեպի գյուղամեջ, ծերունին նորից նստեց քարին, վստեց չիբուխն ու սկսեց ինքն իր հետ մտովի զրուցել, թե էս ո՞նց եղավ, որ աշխարհը նորից իրար խառնվեց, ախպերացած թուրքն ու հայն էլ կրկին շուն ու կատու դարձան:

— Էս հի՞նչ եմ ասում է՛,— ձայնը բարձրացնելով նայեց շուրջը,— թորքից ի՞նչ ախպեր: Էնքան սրա-նրա ընթերին թոզրեն, վեր մունք էլ սկսեցինք հվատալ, փետն էլ ձեռքից գցեցինք, նրանք էլ մորեխի նման շտացան ու թե՛ «Էս Ղարաբաղն էլ է մերը»:

Մեկ էլ մեղանչեց, որ իրեն կրակի բերանը տված թոռնիկի հետ խիստ խոսեց ու հիշեց: Զահել էր, Տիգրանի նման լայնաթիկունք, ջլապինդ, ածխագույն խոիվ մազերով ու բեղերով, երբ մի գիշեր, փոքրաթիվ ջոկատով հարձակվեցին գերմանական շտաբի վրա և հարվածից ուշագնաց սպային պարկի նման շալակը գցած փախցրեց: Իսկ ոռու հրամանատարն էլ ուսին թըմփթըմփացնելով ասել էր:

— Հայերդ քիչ եք, բայց ինքնագոհ կովող: Հենց դրա համար էլ Ասորեստանի բախտին չեք արժանացել:

Արդեն երեկո էր: Ծերունին դեռ մտորումների մեջ «շատ ու խեղճ» անելով շրխկացնում էր թագբեհի քարերը, երբ նորից սկսվեց ունքակոծումը:

— Ա հա՛յ, տեղդ դատարկ չմնա, տու էլ եկ,— կանչում էր կարմրագույն խլեդի մեջ կույզ եկած, չամշի նման կնճռոտված ու փոքրացած կինը և ծոռնիկներից մեկի ձեռքից բռնած, մյուսին էլ գրկած, շտապում ծառերի արանքում ունքապատարան կոչվող թաքստոցը: Նկուղում հարսի գոհվելուց հետո ներքնահարկն այլևս ապահով չէին համարում:

— Է՛, ես դրանց սապուն օտող...— ծոր տվեց ծերունին և գնաց ոչ թե դեպի թաքստոցը, այլ ձեռնափայտն աստիճաններից թխկթխկացնելով բարձրացավ երկրորդ հարկի պատշգամբը, պատուհանները բացելով նայեց դեպի այն գյուղը, որտեղից թռչող ասուպի նման կրակե շիթեր էին ժայթքում ու լսվում արկերի սուլոցները:

Այդ գյուղում շատ էր եղել, իրեն ուստա ասելով գլուխ էին խոնարհել, տուն հրավիրել:

Նա դողդողացող բռունցքները սեղմած հայհոյում էր նաև ոռուսին, որ էլի դավաճանեց իրեն հավատարիմ, հավատացող հային:

Արկերը թռչում էին երկու գյուղերի միջև սահման դարձած այգիների վրայով: Եվ կարծես դադար չկար: Եղավ մի պահ, որ տանջող մտքերից լարված արդեն չէր լսում արկերի ոռնոցն ու պայթյունը: Լուռ նայում էր մթության մեջ որբացած այգիներին:

Անցյալ աշնանն էր, կարուող մի գիշեր տնեցիներից թաքուն իրեն այգի տարավ: Եվ ամեն անգամ հիշելով, ինքն իրեն հարց էր տալիս, թե այդ ինչ ուժ էր, որ թույլ, սնքած ու դողդողացող ոտքերով, մահալի փոխարեն ցաքատը կոշտացած ափում սեղմած, թեք ու նեղ կաճաններով չոքեչոք տեղ հասցրեց, երբ վերջին տարիներին միայն էջին նստած հագիվ էր այգի գնում: Հիշեց նաև, որ այգի մտնելով արցունքները գլոր-գլոր թափվեցին: Իսկ հետո ձեռքերը քսեց խոտերում կորած վագերին, շոշափելով իծապտուկ ողկույզներ գտավ, գուրգուրեց, պոկեց, բայց չկերավ, որովհետև դողացող ու չորացած շրթունքները կարծես սո-

արնձվել էին, կոկորդն էլ խցանվել, այլ գրպաններում տեղավորելով՝ ինքն իրեն ասաց՝ «տանեմ խոխեքն օտեն»:

Նա դեռ մտովի հայհոյում էր վատ մարդկանց, երբ հրագնդի նման մի բան շողշողալով մխրճվեց իր ձեռքով կառուցած հարևանի լքված, կիսավեր տունը: Իսկ քիչ հետո կրակի լեզվակներ սողացին պատուհաններից՝ լուսավորելով շուրջը: Ծերունին չսեսավ պատուհանից դուրս թռչող վառվող կատվին, բայց լսեց նրա սրտաճմլիկ մլավոցները: Խանձահոտն ու խեղդող ծուխը հետրգհետե թանձրացրին մութը:

Նա սկսեց դժվար շնչել, աչքերը մրմռում էին, ունգերը դողում, կոկորդը՝ քերվում, աչքերը՝ ջրակալվում:

— Է՛, օջախը էրվում է, բայց...— գլուխը օրորում էր ծերունին, չհասկանալով արցունքները խեղդող ու մոմնացնող օդից է, թե հոգու ծխից:

Հրետակոծումը չէր դադարում, բայց ծերունին, չգիտես ինչու, որոշեց՝ ինչ էլ լինի մի անգամ էլ տեսնել այգին:

— Չէ, գնամ, գնամ, մի անգամ էլ այգիս տեսնեմ, հնձանիս գինեհոտը շնչեմ, ինչ իմանաս...— ինքն իրեն մրմնջում էր, երբ կարծես երագում պայթյուն լսեց...

Առավոտյան հիմնահատակ ավերված, դեռ ուրակոծվող գյուղը լրիվ դատարկվեց...

\* \* \*

...Յոթ օր անց Տիգրանն իր ընկերների հետ ավտոմատներով գինված, անտառից իջան ամալացած գյուղ և պապի գերեզմանի առաջ երդում տվեցին, որ կմեռնեն, բայց թույլ չեն տա, որ Արցախ աշխարհը դառնա թուրքի ոտքի կոխան:



Նա առաջին անգամ ներս մտնելով աշխատասենյակ, հիշեց, որ այստեղ եղել էր տարիներ առաջ:

Փառավոր նստելով պտտվող բազկաթոռին, բազուկները դրեց փայլփող կորածն ամրակներից, ներքին հրճվանքով մի քանի անգամ թեթևորեն բարձրացավ, նստեց, կրկին աչք ածեց շուրջը:

Տարիներ առաջ ինչ տեսել էր, համարյա նույնն էր: Հատակին արդեն մի քիչ խունացած մեծ գորգն էր, ծաղկավոր վարագույրները, փայլուն գրապահարանը, նույն կարմրագույն չհրկիզվող պահարանը:

Գրասենյակի վրա իրեն ծանոթ բաժակածն գրենակալի մեջ տարբեր չափերի արտասահմանյան գեղեցիկ գրիչներ ու մատիտներ կային: Նորը միայն գունավոր հեռուստացույցն էր:

«Սա էլ փոխարինել է Լեհիցի մեծադիր նկարին: Երկուսն էլ առարկա են»,— իր արած համեմատությունից ավելի հիացած բազկաթոռում նորից պտտվեց, սեղանի օրացույցը մի կողմ հրելով հիշեց այն մանեկենանման քարտուղարուհուն, որը տարիներ առաջ իրեն թույլ չէր տվել ներս մտնել, բայց ինքը վրդովված ու կոպտորեն նրան մի կողմ հրելով ասել էր. «Դուք մինչև ընդունելության օրը «խազեխի» հետ ուտելու բան կունենաք, իսկ ես...»:

Հիշողությունները իրենից չվանեցին անհանգստացնող կասկածը, թե արդյոք ճիշտ վարվեց, որ հանուն պաշտոնի հրաժարվեց պատգամավորի լիազորություններից, երբ հեռախոսի զանգը կտրեց նրա մտքի թելը: Պատգամավոր ընկերներից էր, միջնորդում էր իր բարեկամուհուն տեղավորել մոտիկ միջնակարգ դպրոցում: Հետո էլ կատակով ավելացրեց, թե այդ պիտի արվի տնօրեն դառնալու հեռանկարով:

— Հիմա՛ էլ մենք ենք, ախպեր, թագավորի ու թագուհու «ռակիրովկա» կանենք ու վերջ,— ասաց նա, ոտքը-ոտքին գցելով, ավելի հեռվելով բազկաթոռին՝ ցանկացավ ընկերոջը պատմել, թե տարիներ առաջ ինչպես է աշխատանքի անցնելու համար այս աշխատասենյակը մտել, բայց չգիտես ինչու հարցրեց խորհրդարանից:



— Է՛, Վոսմ, էն է, էլի, ինչ որ տեսնում էիր, իրար ուտում են, հիմա էլ սեփականաշնորհման գործընթացը ժամանակավորապես դադարեցնելու հարցի համար են իրար գգում, թույլ տված խախտումների համար հարցապնդումներ անում: Մի օր էլ տեսար քեզ հարցապնդում արեցինք, թե մեր այս համբերող, ըմբռնումով մոտեցող, հույս ու հավատով սպասող ժողովրդի երեխեքը դպրոցում են շատ լինում, թե քալորի սեղանիկների մոտ:

Պատգամավոր ընկերը իր հումորով ոգևորված թե էլ ինչ էր ասում՝ Վոսմը կարծես չէր լսում, նորից իր մտքերի հետ էր:

Գուցե իրոք շտապեց, չէ որ եթե պառլամենտում մնար, ինքը հարցապնդում կաներ: Եվ նորից հիշեց, թե ինչպես դեպուտատ դարձավ...

\* \* \*

...Ընտրական օկրուգներից մեկն էլ տեղավորված էր իրենց դպրոցի շենքում: Մի օր դասամատյանը թևի տակ հանդիպեց տեղամասի հանձնաժողովի նախագահին, բարեեցին, ծանոթացան:

Մի անգամ էլ դասերից հետո մտավ նրա մոտ, աչքի անցկացրեց դեպուտատության թեկնածուների անունները:

Ցուցակում կարդաց նաև իր նախկին, այն ժամանակ երիտասարդ դասախոսի ազգանունը: Վերջինս ըմբոստ, հայրենասեր, բայց «ազգայնամոլ» պիտակով դասախոս էր, որին հեռացրել էին կուսակցությունից ուսանողներին հայաթափվող Նախիջևանի, Ղարաբաղի նախատագրի մասին իր նախաձեռնությանը դասախոսություն կարդալու համար: Աշխատանքից նույնպես փորձում էին հեռացնել, բայց եղան մարդիկ, որոնք պաշտպանեցին նրան որպես անփոխարինելի մասնագետի:

Մյուս թեկնածուները պաշտոն ունեցող կուսակցականներ էին, գործարանի դիրեկտորներ, կար մեկ բժիշկ, մեկն էլ դարաբաղյան շարժման ակտիվիստ էր:

«Ես էլ եմ ակտիվիստ, ինչու պահը չօգտագործել»,—ցուցակը շուտ ու մոտ տվեց նա, հիշելով, որ ամեն ցույցի օրը ինքն էլ էր եղել թատերական հրապարակում, վանկարկել՝ «Միացում, միացում»:

Մի օր էլ կանգնել էր ցույցի եկած իրենց դպրոցի բարձր դասարանցիների կողքին և դրա համար նախարարության կող-

մից ստացել խիստ նկատողություն որպես կազմակերպողի, երեխաների միտքը պղտորողի: Այն ժամանակ առարկել էր, իսկությունը քացատրագրով ներկայացրել նախարարին, ոչինչ չէր օգնել, բայց հիմա կարող է խիստ նկատողության հրամանի քաղվածքը ուրիշներին ցույց տալով հավատացնել, որ իրոք երեխաներին ինքն է կազմակերպել, ցույցի տարել:

«Այդ հրամանը ինձ համար մեծ անցաթուղթ է, ես էլ կարող եմ այդ ցուցակում լինել», — ամբողջ գիշեր մտորեց նա: Առավոտյան նախագահից իմացավ թեկնածուների գրանցման կարգը, երեկոյան հանդիպեց հարևան Վրույրին, որը գործարաններից մեկում «Ղարաքաղ» կոմիտեի շտաբի նախագահն էր: Վերջինս կարդալով հրամանի քաղվածքը, խոստացավ օգնել, առաջարկելով շտապ նախապատրաստել ինքնակենսագրությունն ու լուսանկարները:

Երկու օրվա մեջ ստորագրություններով հավաքելով բնակիչների համապատասխան ձայների քանակը, կատակով ավելացրել էր. «Հին վարչակարգի կողմից տուժած Վոսմ Առաքելյանը կգրանցվի գալիք անկախ, ազատ Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու»:

Եվ գրանցվեց: Թեկնածուին արդեն պետք էր ճարպիկ, օրենքըն իմացող, մարդկանց հետ լեզու գտնող, վստահված անձ, ինչպես նաև մի ձեղինակավոր անձի հովանավորություն:

Առաջինը հեշտ գտնվեց: Դա թեկնածուի համալսարանական ընկերն էր, դատապաշտպան Մկրտիչը: Վերջինս մի քանի օրվա մեջ ընտրողների բնակավայրերի շենքերի պատերը զարդարեց թեկնածուի գունավոր նկարներով, ինքնակենսագրությամբ և խիստ նկատողության քաղվածքի կրկնօրինակներով:

Վստահված անձը կարողացավ նաև ամեն շենքում կազմակերպել փոքր խմբեր, որոնք քարոզչություն էին տանում բնակիչների մեջ: Միաժամանակ փնտրվում էր ձեղինակավոր անհատը:

Թեկնածուն մի օր, երբ թերթում կարդում էր իր մասին գրված փույում հոդվածը, որի տակ արտատպված էր նաև հրամանի քաղվածքը, աչքին ընկավ Ֆրանսիայից աղետի գոտի եկած բժիշկներին վերաբերող նյութը, ուրախությունից փայլեցին նրա աչքերը: Բժիշկների ղեկավարը՝ ֆրանսահայ Մարատը իր ուսանողական ընկերներից էր, հանրակացարանում ապրել էին մի

սենյակում, իսկ բաժանվելուց հետո էլ երկու-երեք տարի մակագրական կապ պահպանել:

Հաջորդ օրը Վուամը Լենինականում էր, մոռացված ընկերոջ մոտ: Ջերմ գրկախառնումից և փոխադարձ հարցուփորձից հետո Վուամը հայտնեց, որ իրեն առաջադրել են դեպուտատության թեկնածու: Իսկ երբ Մարատն ասաց, թե ինչով կարող է ինքը օգտակար լինել, նա թաքցնելով ուրախությունը, որ ամեն ինչ ստացվում է այնպես, ինչպես ինքն է ցանկանում, իբրև հենց այնպես առաջարկեց ներկա լինել ընտրողների հետ իր հանդիպմանը, ցանկության դեպքում՝ նաև ելույթ ունենալ: Մարատը, որ մտասուզվել էր, հանկարծ նորից պայծառացավ: Պարզվեց, որ մի քանի օրից Լենինականում կլինի հայ ժողովրդի կողմից սիրված, աշխարհաճանաչ ֆրանսահայ ժորեսը:

Իսկ Մարատը նրա փեսան էր:

— Մենք հանդիպման օրը անպայման քեզ հետ կլինենք,— խոստացավ Մարատը:

Վուամը ուրախությունից չգիտեր ինչ անել: Չէ որ աշխարհահռչակ ժորեսն է ականա դառնալու իր հովանավորը: Ընկերոջից բաժանվելուց հետո էլ մտովի կրկնում էր. «Առաջ, Վուամ, բախտիդ դռները բացվում են»:

Օրեր հետո, երբ ժորեսին թևանցուկ արած Մարատը, Վուամը, նրանց հետևից էլ վստահված անձը՝ Մկրտիչը բարձրացան բեմահարթակ, ժորեսին տեսնելու փափագով հավաքված ամբոխը հոտնկալա փոթորկվեց վանկարկելով՝ ժորես, ժորես:

Այդ պայծառ, բարի դեմքով, փոքրամարմին մարդուն շատերը միայն հեռուստացույցով էին տեսել: Նա ուրախությունից ճառագած աչքերով ձեռքերը օդում թափահարելով ողջունում էր դահլիճին: Մարդիկ կարծես լռելու, նստելու միտք չունեին: Երբ կամաց-կամաց դահլիճը հանդարտվեց, թեկնածուն մոտենալով ամբիոնին՝ պաթոսով ասաց.

— Սիրելի ընտրողներ, ինձ թվում է բոլորիս էլ հաճելի կլինի առաջինը լսել մեր պատվարժան հյուրին՝ պարոն ժորեսին:

Նորից ծափահարություններից արեկոծվեց դահլիճը և լռեց այն ժամանակ, երբ թանկագին հյուրը մոտեցել էր ամբիոնին:

Նա սկսեց խոսել: Նրան լսում էին քարացած: Երբ վերջացրեց, ոգևորված դահլիճը փոթորկվում էր: Փոթորկվող դահլիճին ձեռքով անելով, որ լռեն, ամբիոնին մոտեցավ վստահված անձը և բարձրաձայն ասաց:

— Իմ հայ ժողովուրդ, եկել է մեր երազանքի իրականացման պահը, ինչպես տեղին նշեց բոլորիս սիրելի ու հարգելի պարոն Ժորեսը: Մենք ձեզ հետ չպետք է անտարբեր լինենք այս աստեղային ժամին: Այժմ, ինչպես ընդունված է, իր ծրագրով հանդես կգա Վոսմ Առաքելյանը:

Դահլիճում անորոշ լռություն տիրեց: Իսկ երբ նիհար ու բարձրահասակ թեկնածուն վստահ ու ձգված մոտեցավ ամբիոնին, շշուկներ լսվեցին:

— Իմ տառապած, իմ բազմաշարժար, բայց հոգով արի ժողովուրդ, կարգի համաձայն ես էլ եմ ուզում Ձեր առաջ փոել իմ ծրագիրը, որը դուք ավելի մոտիկից ճանաչեք ինձ և ձեր ձայնը...

Նա խոսքը կիսատ թողնելով նայեց դեպի բեմահարթակ: Պարոն Ժորեսը նկատելով նրա հայցող հայացքը՝ գլխով արեց: Թեկնածուն ոգևորված շարունակեց, որ դժվար ու փշոտ քառուղիներով անցած, դարերով պետականությունը կորցրած հայ ժողովրդին նորից հնարավորություն է ընձեռվում բռնել այն անկախության հանապարհը, որն ընդհատվել էր քսանական թվականներին՝ կարմիր տեռորիստների արշուճոտ ձեռքով: Եվ ինքր, որպես այդ տառապյալ ժողովրդի հարազատ ու նվիրված զավակը, որոշել է իր գիտակցական կյանքն անմնացորդ նվիրաբերել անկախության հանապարհը բռնած հայրենիքին:

— Ինչպես ասացի,— շեշտված տոնով շարունակեց թեկնածուն,— իմ ծրագիրն է ազատ, անկախ Հայաստանի հռչակումն ու ամրապնդումը, Հայաստանը ժողովրդական, իրավական պետություն դարձնելը, Ղարաբաղին սատար կանգնելը, մասնավոր սեփականության վերականգնումը, արվեստի, մշակույթի, գիտության անվերապահ զարգացումը, անգիջում պայքարը կաշառակերության, հովանավորության, մի խոսքով՝ նետի սուր ծաշրը պիտի ուղղվի հասարակության մեջ տեղ գտած նեգատիվ երեվույթների դեմ:

Ելույթը ավարտվեց հարց ու պատասխաններով: Պատասխանողը յուրաքանչյուր հարցից հետո մի պահ լռում էր, հազում,

խոհուն կերպարանք ընդունում և պատասխանում, ձայնին հատուկ երանգ տալով, օգտագործելով քիչ գործածվող քաղաքական արտահայտություններ: Իսկ խոստումների բառերը հուզառատ ու ցածրաձայն էլ մլմլում, անորսալի դարձնում:

Թեկնածուն իր ելույթից ու տված պատասխաններից գոհ, ժպտերես շնորհակալություն հայտնեց ընտրողներին, նորից շեշտելով, որ նրանց վստահությունը անշուշտ կարդարացնի և գնացնասեց Ժորեսի կողքը: Վերջինս էլ բարեսրտորեն ու ժպտադեմ ձեռքը դրեց նրա ուսին, որպես իր փեսայի ընկերոջ:

Բժիշկ Մարատը հրաժարվեց ելույթ ունենալ, բայց տեղում կանգնելով հայտարարեց, որ ինքը որպես բժիշկ, պատրաստ է սիրով ընդառաջելու նրանց, ովքեր կդիմեն իր օգնությանը:

Դահլիճը դեռ հուզված էր, երբ այժմահազ տալով, թերթերի փոքրիկ կապոցը գրկած ամբիոնին մոտեցավ վստահված անձը:

— Ընկերներ, ես չեի խոսի, եթե մեր թեկնածուն...

Նա մի պահ պաղ հայացքով չափեց դահլիճը, առջևը դրված թերթերը կրկին ուղղեց, ուռած շրթունքներն էլ ավելի կլորացնելով շարունակեց.

— Այո, միշտ չէ, որ համեստությունը գեղեցկացնում է մարդուն: Մեր թեկնածուի համեստությունը չափազանց է, և դրա համար էլ ձեզանից շատ-շատերը, թեև ապրում են նրա կողքին, բայց նրան դեռ չեն ճանաչում: Եթե նա այդքան համեստ չլիներ, ապա այսօր միջազգային ասոցիացիաների նախագահության պատվավոր անդամ կլիներ: Պարոն Վոամը փայլուն պատմաբան է, բայց բոլորս էլ քաջ գիտենք, որ սին կոմունիզմ կառուցողների համար միայն մի պատմություն գոյություն ունեի՝ ՍՄԿԿ-ի պատմություն և այդ կեղծ պատմության շղարշով պարուրված զանանցանքներ:

Ելույթ ունեցողը ցույց տվեց նաև այն նամակների ծրարները, որոնք թեկնածուն ժամանակին ստացել էր Մարատից: Նա նամակների փաստը ներկայացնում էր իբրև թեկնածուի մտահոգությունը Ղարաբաղի, Նախիջևանի, Հայաստանի ճակատագրի համար նոր չէ: Մկրտիչը ամբիոնն ավելի գրկելով, մի պահ դադար տվեց և նայեց Մարատին: Վերջինս գլխով արեց, հավաստելով խոսողի անկեղծությունը, որովհետև ուսանողական տարիներին իրոք, իրենց սենյակում հավաքվող ուսանողները

տարաբախտ հայերի նակատագրի մասին շատ էին խոսել, վիճել, իսկ նամակում Վռամը հիշել էր այդ մասին: Հետո թերթերից մի փունջ, որի մասին նույնպես խոսել էր, օդում թափահարելով՝ դուրս եկավ ամբիոնի հետևից, մեկնելով առաջին շարքում նրատաճներին: Թեկնածուն Մարատի միջոցով Ղարաբաղյան շարժման մասին տեղական թերթերից մեջբերելով ու կցմցելով հոդված է ուղարկել Ֆրանսիա: Իսկ Ժորեսն էլ արագացնելով հոդվածի թարգմանությունն ու տպագրումը, թերթի համարներից բերել էր:

— Այժմ այլ է,— շարունակեց,— հայրենասերներ շատ կգրուներվեն: Ավելացնեմ նաև, որ Ղարաբաղյան շարժման այն օրերին, երբ կարմիրները բանտով էին սպառնում, պարոն Վռամը կազմակերպեց իրենց դայրոցի բարձր դասարանցիներին և իր հետ տարավ ցույցի: Իսկ դա այն ժամանակ, թե ինչ էր նշանակում, թողնում եմ ինքներդ կռահեք, հարգելի ընտրողներ:

Խոսողը նորից լռեց, լիզեց լորձուկքոտ շուրթերը, դահլիճին պարզեց նախարարի խիստ նկատողության հրամանի քաղվածքը և հուզաձայն կարդաց:

Փառահեղ հանդիպումը ավարտվեց, բայց վստահված անձի սցենարով մինչև ընտրությունների ավարտը քարոզչական աշխատանքը շարունակվեց:

Ընտրություններում Վռամ Առաքելյանը փայլուն հաղթանակ տարավ, Մկրտիչը խորհուրդ տվեց, որ ակտիվություն ցուցաբերի խորհրդարանի նիստերի ժամանակ, մանավանդ առաջին օրերին, հաճախ ելույթ ունենա, պլտերնատիվ առաջարկություններով հանդես գա՝ «խոսիր, որ նանաչեն» նշանաբանով:

Եվ պատգամավոր պարոն Վռամը այդպես էլ անում էր, թեև երբեմն չէր կարողանում իր առաջարկությունները գիտականորեն կամ տրամաբանորեն հիմնավորել:

Եվ մի օր էլ պատգամավորներից մեկը ռեպլիկ տվեց. «Լսենք պլտերնատիվին»: Այդ անվանումը տարածվեց, պատգամավորներից անցավ ժողովրդին:

Մի անգամ էլ, երբ քննարկվում էր բյուջետա-ֆինանսական հարցը, նա էլի իր կարծիքով «անհրաժեշտ ու տեղին» առաջարկություն արեց, իսկ պատգամավորներից մեկը բարձրաձայն ասաց.

— Էլի՞ պատմություն եք կերտում:

— Այո, ամեն գիտություն իր պատմությունն ունի,— եզրակացրեց նա:

Բայց երբ վերջնականապես համոզվեց, որ արդեն դրսում էլ են ծաղրում, «ալտերնատիվ» կոչում, որոշեց մինչև նոր ընտրությունները առիթը օգտագործել և կարգին պաշտոն ձեռք բերել:

\* \* \*

— Այ տղա, Վոսմ, քնե՞լ ես,— պատգամավոր ընկերոջ ձայնը բարձր հնչեց լսափողում,— ինչո՞ւ ձայն չես հանում:

Նա մղձավանջից արթնացածի նման սթափվեց ու ծիծաղելով ասաց.

— Այստեղ չեն խոսում, այլ աշխատում են:



Դեռ լույսը չբացված, ձեռնափայտին հենվելով, ոտքերն էլ քստքստացնելով գնում էր հացի հերթ պահելու, ինքն իրեն մըրմընջալով՝ «Տեսնես, տղաները կրակ ե՞ն արել»:

Տղաներն իր նման ոտք ու ձեռքից ընկած մարդիկ էին, որոնք միշտ շուտ էին գնում, իրենց հետ տանելով փայտի կտորներ:

Նա, հեռվից նկատելով կրակի դեղնագույն լույսը, ուրախությունից ձեռնափայտը խրեց սառցակալած փոքրիկ ջրափոսը:

Կրակի շուրջը հավաքված «տղաներից» բացի, երկու ջահել էլ կային: Թեև դեռ մութ էր, նա բարի լույս ասելով, ձեռնափայտով իրար վրա բերեց կիսավառված փայտի կտորներն ու ձեռքերը երկարեց դեպի կրակը: Տարությունը հաճելի էր:

— Էս տարությունն էլ է արքայությունից եկել,— ասաց նա, նայելով երիտասարդներից գլխաբացին:

Վերջինս ժպտաց, իսկ մյուսը, որը թասականման գլխարկով ծածկել էր նաև վիզը, հեզանքով ասաց.

— Էլ ի՞նչ է արքայությունից եկել, հայրիկ:

Նա գլուխն օրորեց, իսկ տարեց մարդկանցից մեկը բարձրաձայն ասաց.

— Էս ձեր բերած ազատությունը, որ համ ուրիշն է մեզ սպանում, համ էլ մենք՝ իրար: Է՞ս էիք ուզում, փորներիդ կշտացել էր, բա ո՞նց կլիներ:

— Դուք դե՞մ եք մեր անկախությանը,— նորից հեզանկան բերանը ծռեց թասակավորը:

Տարեց մարդը տնքաց ու լռեց, որովհետև նոր մարդիկ եկան, բոլորեցին կրակի շուրջը: Սկսված գրույցը վերածվեց վեճի:

Յուրաքանչյուրը մոլի ցավաբաշի նման իր ասածն էր պնդում, պաշտպանում կամ քննադատում դեկավարությանը, որ Հայաստանը հասցրել են աղետալի վիճակի:

Եկողներն ինչքան շատանում էին, աղմուկն ու ժխորը թանձրանում էր:

— Ա՛յ ժողովուրդ, չե՞ք հասկանում, որ Տիգրան Մեծն անգամ բարեկամություն է արել իրենից թույլ ու ուժեղ թագավորների հետ: Հիմա մի մատնաչափ ենք, բայց ոուսի հետ պոզ-պոզ



ենք անում, երեսներս էլ դարձրել դեպի մեր դարավոր թշնամուն, թե ազատ, անկախ Հայաստան ենք կառուցում: Ում հետ ուզում եք բարեկամություն արեք, բայց...— հոգոց հանեց նա, որին արդեն ոչ թե հայրիկ, այլ քեռի Միհրան էին կոչում:

— Հա էի, ճիշտ ես ասում. հին թշնամուց բարեկամ չի փնի, բարեկամից էլ՝ թշնամի: Էսօր ո՞ւմ հետ և ինչո՞վ պիտի անկախ Հայաստան կառուցենք: Էս ջահելները ժողովրդին խաբեցին, թե էս ունենք, էն ունենք, ճիշտ խոսողին էլ դավաճանի պիտակ կպցրին, էն աղվեսի պոչի նման ծառի շվաքը պոչին վերագրեցին: Դե գիշերները, էս ցրտին, հերթի կանգնեք, մի քանի գրամ թանկացած հաց փախցրեք, որ ճանաչեք, թե ինչ է եղել Ռուսաստանը Հայաստանի համար,— նորից խոսեց տաբեց մարդը:

— Բա ազատություն՞ւնը, անկախություն՞ւնը,— կրկին ձայնը հեզնորեն բարձրացրեց երկարավիզ երիտասարդը:

— Այ բալա,— ձեռնափայտով նորից կրակը խառնելով խոսեց Միհրան քեռին,— էդ քո ասած բանը միշտ էլ եղել է ու կլինի, խելոք մարդն այնպիսի ճաշ պիտի եփի, որ ուտվի:

Տարեց մարդուն և Միհրան քեռուն էլի դատապարտող ու համակրողներ եղան, վեճն ավելի բորբոքվեց, իսկ նոր եկողների համար կրակի շուրջն արդեն նեղ էր:

— Ա՛յ տղամարդիկ, մեզ էլ տեղ արեք,— ասաց շալի մեջ փաթաթված կինը,— ձեռքի բարակ ճուղը նետելով կրակի մեջ:

Կանանցից մեկն էլ տղամարդկանց բոթելով առաջացավ ու կշտամբեց գոռգոռացողներին:

- Մորաքույր ջան, գոռոռում ենք, որ տաքանանք:
- Հիմա ո՞վ է կամաց խոսողին լսում:
- Պիտի ավելի բարձր գոռալ, որ ձեններս տեղ հասնի:
- Միևնույնն է, լսող չկա, լսողներն իրենք իրենցով են զբաղված:

- Խույ ականջի համար բոլորն էլ համր են:
- Լեճիճականցիների նման պետք է իշխանության տուն կոչվածը տակնուվրա անենք, որ լսեն,— խոսում էին այս ու այն կողմից առանց իրար լսելու:

— Դե, լռեք, մինչև կոլխոզի ժողով դառնալը, Միհրան քեռին իր հասակակիցների հետ Էսօրվա մեր քաղաքականության ճաշը տեղը-տեղին եփեց, հիմա էլ խնդրենք, տեսնենք էս սեփա-

կանաչնորհման մասին ինչ կասի,— ձայնն ավելի բարձրացրեց հեզնող երիտասարդը:

Բոլորը լռեցին:

— Բալա ջան ասեմ, համոզված լինելով, որ մի օր ինքդ քեզ կկշտամբես, ճշմարտությունն ուշ հասկանալու, ծերուկներիս էլ ծաղրելու համար: Հիմա լսիր:— Միհրան քեռին բացատրեց, որ սեփականությունը հարստանալու, ամեն մեկն իր հոգսերը հոգալու ամենաճիշտ ձևն է, բայց ժամանակի, ժողովրդի պահանջից ելնելով պիտի գործ բռնես, որ չսխալվես:

— Իմ պապը,— մի պահ լռելուց հետո շարունակեց նա,— հողի մարդ էր, հացով էլ էր իրեն բավարարում, իսկ Հոկտեմբերյան հեղափոխություն կոչվածը խաբեց ժողովրդին, հողը, լծկանը ու կթանը խլեց, կոլխոզ շինեց, մեզ սոված կոտորեց, մինչև ժամանակը քանդածը կամաց-կամաց դգեց, տրակտոր, կալսիչ, հետո էլ կոմբայն ստեղծեցին, քիչ-միչ մեր օրը լավացավ: Հիտլերի հերն էլ անհիծելուց հետո սկսեցինք շունչ քաշել, ինչ ուզում էիք՝ լավից-վատից, շատից-քչից կար:

— Բա ինչո՞ւ չեք ասում կեղեքիչ հարկերի մասին, որ եզան տակին հորթ էին փնտրում, հավին էլ ստիպում, որ ձու շատ ածի: Մեր գյուղում հավին կախել էին, վզին էլ կախված պիտակին գրել. «ինքնասպան եղա, ձվի հարկը չտալու համար»,— ծաղրեց գոռոռացողներին կշտամբող կինը:

— Բա էս ո՞նց եղավ, որ միանգամից ամեն ինչ կտրվեց, թանկացավ,— նորից գոռոռացին այս ու այն կողմից:

— Դեռ ոչինչ չարած, հինն էլ քանդեցինք, այ բալա:

— Մենակ էդ չէ, ձեռներս գրպաններս, փափախներս էլ ծուռ դրեցինք, բլոկադա-բլոկադա ասելով, տարիներով ստեղծածը հավաքեցինք մի քանիսի գրպանը լցրինք, գյուղացուն թողնելով միայն բահն ու բրիչը:

— Բա, բահ ու բրիչով, նախամարդու գործելակերպով հիմա ժողովուրդ կարող ես պահել,— հառաչեց կրակը խառնող տարեց մարդը:

— Բա չգիտեիք, որ Հայաստանը շշի մեջ էին առնելու, քերանն էլ փակելու...— մեջ ընկավ նոր եկած կանանցից մեկը:

— Միայն բլոկադա չէ, նաև պատերազմ է,— վրա բերեց մեկ ուրիշը:

— Հա, բալա ջան, մեր տեսած պատերազմն ավելի ահավոր

էր, էն օրերին էլ էինք հերթ կանգնում, բայց էն ժամանակ էս քաղաքում աշխատող մարդուն յոթ հարյուր գրամ հաց էին տալիս, իսկ հիմա, աշխատող-չաշխատող, երկու հարյուր հիսուն գրամով պիտի բավարարվի, էն էլ աստված գիտի... ոչ քաշ կա, ոչ էլ կշեռք,— նորից խոսեց Միհրան քեռին:

— Բա էն չես ասում, որ հերթ-մերթ չկար, ցանկացած խանութից հացդ կառնեիր, նույնիսկ աշխատանքի վայրում: Հետո կարգ կար, կանոն կար, ո՞ր խանութի աշխատողը կփորձեր հաճախորդին ծուռ նայել, հացի փշրանքն անգամ յուրացնել, հերը կանհիծեին: Հիմա ով ինչպես ցանկանում է, այնպես էլ վերաբերվում է, մեր հասանելիք հացի տերն էլ չենք,— կրկին դժգոհեց տարեց մարդը:

— Միհրան քեռի, դուք պատերազմի ժամանակ ի՞նչ էիք անում,— սրան-նրան բոթելով առաջ անցավ նոր եկած ձիադեմք մի երիտասարդ, որը թասակավորի հետ սրան-նրան ձեռ էր առնում:

— Տղա ջան, էն ժամանակ քո պապի հետ նեմեցի աչքն էինք խառնում, որ քո հայրը, դու, քո որդին էս օրը չտեսնեիք:

— Իսկ նեմեցի աչք խառնողներդ՝ Հայաստանի անկախության մասին հեչ հիշե՞լ եք:

— Այ բալա, էդ մասին արդեն քանի ժամ է չանա ենք թակում, թող ասելիքս պրծնեմ:

— Մի խանգարեք,— այս ու այն կողմից կշտամբեցին հոխորտացող երիտասարդներին:

Միհրան քեռին խոսքն առաջ տանելով պնդեց, որ սակավահող Հայաստանում հողի սեփականաշնորհումը միանգամից չափտի տրվեր, այլ անգամ սովխոզ կոչվածները պիտի նորից կոլխոզ դարձնեին, նախկինի նման կենտրոնացված եկամուտներով ժողովրդին պահեին, նամանավանդ հայի, թուրքի կոիվ է: Միաժամանակ պիտի մեկատուսությունների զարգացմանը կանաչ ճանապարհ տային, ցանկացողներին տրամադրեին չմշակված տարածքներ, օգնեին, որ նրանք բարիքն իրենց ձեռքերով ստեղծեին, բերկրանք զգային, այլ ոչ թե ուրիշների ստեղծածին տեր դառնային, որ էսօր էլ... էն ժամանակ էլ քանդեցին, հիմա էլ:

— Ճիշտ է ասում: Էն անգամ տելեվիզորով ցույց տվեցին, թե ֆերման սեփականացրած մարդը ո՞նց է ֆերմայի գլխին քար գցել: Էդ մեկը տեսանք, բա մյուսները...: Դրա համար էլ էսօր

կարագի, պանրի, կաթի, մսի... մի խոսքով՝ բոլոր ասորանքների գները հասցրել են երկինք,— բորբոքվեց շալի մեջ փաթաթված կինը:

— Իսկ էդ կոլխոզ կոչվածն ինչքա՞ն պիտի պահեինք,— նորից հեզվեց ձիադեսք երիտասարդը:

— Էնքան, բալա ջան, որ պետությունը ժողովրդին բան ունենար տալու, շուկա հանելու, չարչիների ախորժակին քացախ լցնել, Ղարաբաղին էլ շատ օգներ: Հետո կյանքը ճիշտ ճանապարհ ցույց կտար: Հիմա ով ձվից դուրս է գալիս, փողոցում վաճառատեղան, մի վաճառաբուն է տնկում, իսկ թե այդ ասորանքներն որտեղի՞ց են, աստված գիտի: Մենք պիտի ստեղծենք, մենք, որ ժողովրդին կարողանանք կերակրել: Պիտի հասկանանք, որ ժողովրդին թալանելով, ազգին այլասերելով ու աղքատության դուռը հասցնելով պետություն չես ստեղծի: Պետությունը ինքը պիտի իրեն ստեղծի: Հիմա էլ մեզ ձեռ եք առնում, թե մենք դես ենք անկախությանը: Մենք դես ենք այս անտերությանը, այս բիզնես կոչված պորտաբուծությանը, սպեկուլյացիային: Էն էլ ենք հասկանում, որ էսօր տարրեր ազգերի մեջ թափվող արյունը էի կոմունիստների արածն է: Եթե «թոփ ու թվանգով» մեկը մյուսի տունը չխցկեին ու ստիպեին, թե պիտի եղբայրաբար ապրեք, էլ իմը, քոնը չկա, բոլորս մի երկնքի տակ ապրող ախպերներ ենք, էս օրը չէինք տեսնի: Իսկ ով փորձում էր հանդգնել, թե «ախր, էսպես չի լինի», Սիբիր էին քշում:

— Ասա է, սրանց գլուխն էն էլ չի մտնում, որ էսօր հողի տերը գյուղացին չէ: Քաղաքի «լավ տղերքից» շատերը «ժած» են եկել, գյուղացու անունով հող ու ֆերմա գնել, հողատիրոջն էլ բատրակ դարձրել: Հիմա էլ երբ համը դուրս է գալիս, էդ նոր ղեկավարներ կոչվածները հերթով հրաժարական են տալիս, ոմանք էլ տեղից-տեղ տեղափոխվում: Էդ ո՞ր քոռը չի տեսնում, որ դրանք էլ կոմունիստների նման իրենց յոթ պորտին էլ են ապահովել: Ի՞նչ հրաժարական, ի՞նչ տեղափոխում, դրանց հրապարակորեն պիտի դատել,— զայրույթից նորից ձայնը բարձրացրեց շալում փաթաթված կինը:

Միհրան քեռին գլուխը օրորելով շարունակեց.

— Ժողովուրդ, էն էլ ասես, որ ազգի առաջին թշնամին այլասերությունն է, ուսյալ, խելոք մարդկանց հանապազօրյա հացի կարոտ թողնելը, նրանց գող ու ավազակներին ծառա դարձնելը:

Աչքների բացեք, լավ նայեք, տեսեք Հայաստանում այսօր ուղքեր են վայելում, ուղքեր են... — գոռոռոռոցների մեջ խեղդվեց Միհրան քեռու ձայնը, նա լռեց ու տնքաց:

— Ռուսը ֆիզիկապես մեզ չէր սպանում:

— Սրանք էլ են կաշառակեր կոմունիստների նման ժողովրդի անունից խոսում ու նրանց նման էլ միայն իրենց տեսնում:

— Խարվեցի՞նք, խարվեցի՞նք, այ ժողովուրդ... ինտելիգենցիան կործանվում է...

— Ի՞նչ եք ձենների գլուխների գցել, կուլտուրա ունեցեք, մարդը դեռ ասելիքը չի ավարտել, — լսվեց մի բամբ ձայն:

Վերջին խոսողի ձայնը դեռ չէր մարել, երբ լսվեց.

— Ժողովուրդ, դուրք բացում են:

Բոլորը ջուրը վազող նախրի նման շտապեցին դեպի խանութի դուռը: Մինչև Միհրան քեռին տնքանքալով ու երերալով կմտենար դռանը, արդեն սպասողներն իրար հրմշտելով, վիրավորելով ներս էին խցկվում:

Գլխաբաց երիտասարդը, որ լուռ լսել էր վեճն ու ինքն իրեն վերլուծելով հանգել այն կարծիքին, որ անկախությունը՝ այսօր ինչ էլ բերի, որքան էլ ծանր նստի ժողովրդի վրա, ինչքան էլ սխալներ թույլ տրվի, այնուամենայնիվ անհրաժեշտություն է, քանզի ազգը ազգ մնալու համար պիտի անկախ լինի, «ստաջնորդները» կգան ու կգնան, իսկ ազգը կմնա: Բայց կուզեք գոնե ինքը պատասխանած լինեք՝ «այս շարժումն ի՞նչ տվեց, ի՞նչ շահեցի՞նք» անպատասխան հարցին: Համոզված կասեք, թե Հայաստանում էլ չի կրկնվի 1937—1949 թվականները, որ հայ ժողովրդի գլխից ընդմիջտ կվերանա կոմունիստների դամոկլյան սուրը: Նա դեռ մտասույզ, մեն-մենակ կանգնել էր, երբ մոտեցավ մայրը, փոքրիկ, շատ փոքրիկ փաթեթով:

— Որդիս, էս վերցրու ու շտապիր, որ չուշանաս, ամբողջ օրը սոված դիմանալ կլինի՞:

— Մամ, հինգերորդն են, թասակավորից հետո, նրան ճանաչում ես:

Առաջին կուրսի ուսանող տղան փաթեթը վերարկուի ծոցագրպանը դնելով հեռացավ: Մայրը սրթսրթալով, բայց գորովանքով այնքան նայեց որդու հետևից, մինչև կորցրեց տեսադաշտից:

Ամեն օր, կեսօրից հետո, գրիչս վար եմ դնում ու իմ սովոր փողոցի մայթով գնում Երևանյան լճի շուրջը պտտվելու, թարմանալու: Իհարկե, աղբավայր, կեղտաջրի փոս դարձած լիճը միշտ էլ դառնություն էր բերում, բայց այլ ելք չունեի, այդ կողմերում եմ ապրում:

Մի օր էլ լճին մոտենալիս՝ աղբատար մեքենան հավասարվեց ինձ:

— Սերո, կանգնիր, չեմ հասցնում,— ձայն տվեց աղբահավաքը:

— Դանդալո՛ւ, չգիտե՞ս որ բեռզին չկա, արագ-արագ շարժվիր,— գոռաց վարորդը:

Աղբատար մեքենան շատ դանդաղ ընթացքով առաջ էր շարժվում, իսկ վիրակապված գլխով ու դեմքով ակնոցավոր աղբահավաքը, որին վարորդը դանդալո՛ւ անվանեց, թիթեղյա, լայնաբերան բահով մեկ-երկու շարժումով, փողոցի բանուկ մասում մոտիկ-մոտիկ կուտակված փոքրիկ աղբակույտերը լցնում էր մեքենայի թափքը:

Ես կանգ առա, իսկ մեքենան դանդաղ առաջ անցավ: Աղբահավաքը շարունակում էր արագ-արագ ու լուռ աշխատել, որ մեքենայից հետո չմնա: «Հավանաբար նա չէր լսել իր հասցեին շարտված վիրավորանքը: Ինչո՞ւ է խեղճ մարդն այդ վիճակում աշխատում, մի՞թե փոխարինող չկա»,— մտորելով շարունակեցի քայլել:

Մեքենան հասնելով լճի մյուս ծայրը, կանգ առավ: Թեև հեռվից էի նայում, բայց դժվար չէր կռահել, որ վարորդն ու աղբահավաքը կողք-կողքի կանգնած ծխում են:

Հետո մեքենան շրջվեց մայթի հակառակ կողմը: Նայելով լճի առաջը պատկեշող ճանապարհի երկարությամբ ձգվող այլուսիներ եզրաձողերին, որոնք օրեցօր պակասում էին, դառնացած քայլում էի, հիշելով ամիսներ առաջ «Երեկոյան Երևան» թերթում տպագրված «Երևանը քանդում ենք» հոդվածս:

Մեքենան հետ էր գալիս նույն դանդաղ ընթացքով:

Երբ մոտեցան, նորից նայեցի աղբահավաքին, որն իր շարժումներով կարծես ինքն էլ էր մեքենա դարձել: Ես էլ հետ դարձա, որովհետև սրտիս ծակոցները արդեն նեղում էին, բայց ցա-



վրա մոռացած մտածում էի՝ «տանը ուտելու բան չկա, արդեն կարագի, պանրի, մսի համը մոռացել ենք, թանկացած մի կտոր հացն էլ կտրոնով պիտի առնենք: Առաջ գոնե հոնորարով ու աշխատավարձով՝ լավ ու վատ ապրում էինք, կոպեկը լուցկու արժեք ուներ, հիմա կարմիր տասանոցը նրա արժեքն էլ չունի: Մի փոքրիկ բրոշյուր լույս ընծայելու համար հարյուր հազարներ են պետք: Ինձ նման գրիչ ունեցողը գլուխը որ քարին տա: Քո-ղարկված թալանն ու կաշառքն էլ՝ ազատ, անկախ Հայաստանում թևեր առան, վերավաճառողներին բիզնեսմեն անվանեցին, իր քրտինքով ապրողին էլ ոտի կոխան դարձրին»:

Այնպես էի խորասուզվել ճնշող մտքերիս մեջ, որ նույնիսկ մոռացել էի որտեղ եմ գտնվում, թեև սլացող մեքենաների դրո-դրոնցներն ու ճոնչոնցներն սղոցում էին ձգված ներվերս:

«Իսկ եթե՞ ես վիրակապով դեմքս ծածկեմ, որ չնանաչեն, ազատ ժամերիս հաշվին աղբ հավաքելով հացի փող աշխատեմ, վա՞տ կլինի: Բայց ինչո՞ւ ծպտվել, ազնիվ աշխատանքը ինչ բնույթի էլ լինի, անպատվություն չէ: Անպատվությունը աղքատությունն է»:

Մտքերիս հետ կոիվ տալով, հատեցի փողոցը և ծառապատ լանջով հասա Վերին Ծեևգավիթի հին բնակատեղին, որը տարիներ առաջ, պեղվել, կարգի էր բերվել, ցանկապատվել, բայց նորից մատնվել անուշադրության:

Անցնում էի թմբից-թումբ, նայում մացառներով ու խոտերով կիսածածկ բնակատեղին, ավերված ցանկապատին ու մտածում՝ թե հայ ժողովրդի գոյատևումը հրաշքի, քաջության, արարման շնորհի՞վ է, թե օրհասական պահերին միավորվելու բնագրի, նրան առաջնորդող աստվածատուր անհատների շնորհի՞ արդյունք:

Մտորումների մեջ արդեն հետ էի վերադառնում, երբ նկատեցի, որ ծառերի արանքով, վախեցած նապաստակի նման հետ ու առաջ նայելով, դեպի թփերն է շտապում տեսածս աղբահավաքը:

Նա մարդաբոյ թփի հետևում կանգ առնելով ու շուրջը նայելով, քանդեց գլխի վիրակապը ու ակնոցների հետ փաթաթելով դրեց մոմլաթե տոպրակի մեջ, սանրեց մազերը և, տոպրակը ձեռքն առնելով, գնաց դեպի փողոց:

Հանկարծ խիստ ցանկությունն առաջացավ մոտիկից տեսնել այդ ծպտված մարդուն: Կիսավազ ու կոացած, որ չնկատվեմ, շտապեցի դեպի փողոց:

Աղբահավաքը հասնելով մայթին, նորից նայեց շուրջը, կրծկը ված ու մտասույզ քայեց դեպի կանգառ:

Նա պիտի անցներ իմ կողքով: Դեռ չհասած ինձ, ճանաչեցի նրան...

1988 թվականի բուռն ցույցերի օրերին օպերայի հրապարակում նրան հաճախ էի տեսնում: Նա միշտ հպարտ ու ձգված էր քայլում իրենց կոլեկտիվի առջևից, որոնք հրապարակ էին բերում լեհիկյան կուսակցությանը, Գորբաչովին, Սումգայիթի ցեղասպանությունը դատապարտող պաստառներ ու լոզունգներ: Մի անգամ էլ լսել էի նրա ելույթը, ուր կոչ էր անում պաշտպանել «Ղարաբաղ կոմիտեին», գործադուլը շարունակել այնքան ժամանակ, որ «վերին էշելոնները» դատապարտեն, քաղաքական գնահատական տան Սումգայիթի եղեռնագործությանը, ձեռնամուխ լինեն Ղարաբաղի հարցի արդար լուծմանը: Նրանց գիտական հիմնարկը երկու տարի առաջ լուծարքի էր ենթարկվել, որովհետև Մոսկվան հրաժարվել էր ֆինանսավորելուց:

Երբ հավասարվեց ինձ, ուզեցի նրանից միայն մի բան հարցնել, թե այդ վարորդը, որի հետ աշխատում է, գիտի՞ իր ով լինելը: Բայց վախենալով վիրավորել նրա ինքնասիրությանը, լռեցի, մտածելով՝ «ի՞նչ բան է կարիքը, ի՞նչ է կյանքը, ճակատագիրը...»

Եվ երբևիցե կհաղթանակի՞ ճշմարտությունը, կգնահատվի՞ ազնվությունն ու արդարությունը... Չէ, ինչ էլ լինի, ազգի ազատությունը վեր ու թանկ է ամեն բանից: Ազատությամբ է ազգը ազգ դառնում: Պետք է գործադրել քսանական թվականներին կորցրած ու յոթանասուն տարի անց նորից ձեռք բերած Հայաստանի անկախությունը»:

Ինքս ինձ սփոփելով ու խորհելով, բայց ավելի ընկճված ու դառնացած բռնեցի տան ճամփան: Սակայն ինձ ավելի տանջում էր նաև այն միտքը, թե այսօր ովքեր են մեզ առաջնորդում:



Նա վերջին տարիներին ձմռանը դուրս չէր գալիս, նստում էր փողոցին նայող պատշգամբում, նվաղած աչքերը հառում արդեն նիհարած ու թախծուտ անցվորներից ու մտամոլոր հիշում...

...Պատերազմ էր, բայց մարդկանց շարժումներում, հայացքներում վհատություն, դժգոհություն չկար, այլ հավատ ու լույս կար նրանց աչքերում, հոգիներում՝ սեր ու բարություն, ժպտալով էին բարևում, իրար մխիթարում, հացի պատառը կիսում, հերոսացած նահատակների անունները պատկառանքով արտաբերում: Անգամ գերմանացիների նորանոր հաջողությունները կարծես անտեսում էին, աշխատողը աշխատում էր, սովորողը սովորում, լուռ ու անտրտունք բավարարվում էին եղածով, քանզի ունեցողչունեցող չկար, բոլորն էլ ապրում էին հավասար, կտրոնների հասանելիքով: Քաղաքային ռադիոցանցը աշխատում էր անխափան, օրվա սահմանված ժամերին հաղորդում էր ինֆորմացիոնային հաղորդումները, որը մագնիսի նման ձգում էր բոլորին, և մարդիկ՝ տանը թե դրսում, շունչները պահած քարանում էին: Իսկ երեկոյան կամ գիշերները էլեկտրական լամպերը հանգցվում կամ քողարկվում էին, երբ քաղաքային ռադիոցանցը կրկնում էր սարսուռ ու վախ բերող «տագնապ» բառը:

Նա էլ պիտի զինվոր դառնար, բայց չդարձավ, թեև մի քանի անգամ դիմել էր ուր պետք էր: «Դուք տեխնիկական ու գյուղատնտեսական կրթություն ունեք, դուք այստեղ էլ եք պետք»,— այսպես էին պատասխանել, և մի օր էլ ուղարկել քաղաքի մոտիկ շրջաններից մեկում նոր կազմակերպվող մեքենատրակտորային կայանի տնօրեն:

Հիշողության մեջ չէր խամբում այն օրը, երբ սուաջին անգամ եղավ նոր աշխատավայրում:

Նրան ոչ ոք չդիմավորեց: Քիչ հետո երևաց մի ծերուկ: Հետևից եկող շունը տիրոջ ոտքերին քամսվելով ծմրկուաց: Իսկ երբ պահակը իմացավ, որ անձանոթը՝ Շշմարիտյանը, կայանի տնօրենն է, շան գլուխը շոյելով ասաց.

— Ծիշո եմ ասում, շունը մարդուց իմաստուն է:

Նա էլ շոյեց շան գլուխը:

— Հազար բարով ես եկել, ինչ տեսնում ես՝ քոնն է,— նորից խոսեց ծերունին:

Բարաքանման շենքի բակում, կղմհղրի ծածկի տակ կարծես հիրհում էին փոշեթաթախ սեպավոր անհիվներով չորս տրակտոր, երկու կալսիչ ու մեկ կոմբայն: Այդ օրվանից մոռացավ թե քաղաք, թե տուն:

Հանդերում արդեն դեղնում էին արտերը, կիսասոված ժողովըրդին, կովող գինվորներին հաց էր պետք:

Կոլտնտեսության նախագահի օգնությամբ իր համար տուն վարձեց, կայանի տարածքը ցանկապատեց և աշխատողներ ընդունեց:

Գիտնական կնոջը հանդիպում էր, երբ գործի բերումով քաղաք էր մեկնում: Հետո նոր տրակտորներ, կոմբայններ ստացավ, հոգսերն էլ հետը: Բայց ինքն էլ չիմացավ, թե չորս լարված տարիները ինչպես անցան, սակայն երկու շքանշան, երեք մեդալ ու բազմաթիվ պատվոգրեր ստացավ:

Այդ տարիներին նույնիսկ կոլտնտեսությունների նախագահների հետ լուրջ վեճ չունեցավ, թեև կոլտնտեսությունները ճգնում էին իրենց ուժերով ավելի շատ վար ու ցանք, հունձ անեն, որ պետության մթերումը տալուց հետո կոլեկտիվին բան մնար, թե չէ պետությունը ուսնում, հա տանում էր:

Պատերազմը ավարտվել էր, կինը արդեն աշխատում էր պատերազմի տարիներին ստեղծված ակադեմիայում, աղջիկը դարձել էր աշակերտուհի, բայց իր դիմումները՝ քաղաք տեղափոխվելու համար մերժվում էին: Սակայն մի օր ընտանեկան պայմանները հաշվի առնելով հարգեցին:

Քաղաքում գարնանը, աշնանը շաբաթօրյակները հաջորդում էին իրար: Փողոցների երկայնքով ու մերձակա քարքարոտ տարածքներում ծառատնկումներ էր կատարվում: Քաղաքի կառուցապատման ու կանաչապատման աշխատանքների կազմակերպման գործը նրան էին հանձնարարել: Նա նորից թաղվում է անվերջանալի աշխատանքի մեջ, կրկին լսում կնոջ անթաքույց կրճտամբանքը. «Ախր, երբ ես մարդավարի մի օր քո տան հոգսերը ինձ հետ կիսելու»: Նա էլ էր երազում, որ գոնե մի կիրակի տանը մնար, ուրիշների նման պտուկեր, հանգիստ թերթ ու գիրք կարդար:

Մի օր էլ կանչեցին, ավելի բարձր պաշտոն առաջարկեցին: Երեկոյան մտորումների մեջ տուն դառնալով, ինքն իրեն ասաց.

«Էս ո՞ր հասցրին, քաղաքի տեր ու տիրական, բայց գլուխ կհանե՞մ»:

Առավոտվանից թղթերի ու աշխատողների հետ էր, իսկ մութն ընկնելուց՝ մենակ էր շրջում, որ տեսնի ինչ է արվում քաղաքում և համոզվի, թե կարգադրությունները ինչպես են կատարվում: Հաճախ լինում էր նաև շինարարություններում, գործարաններում, ֆաբրիկաներում: Վա՛յ նրան, ով թերացել էր իր պարտականությունների մեջ: Կանչում էր ու քրտնացրած դուրս հրավիրում, ասելով՝ «Չաշխատողը պատճառներ կփնտրի»: «Ովքեր են սրան այդքան ստույգ տեղեկություններ հաղորդում»,— հարցնում էին իրար զարմացած:

Իսկ դեռ լույսը չբացված, նա տնից դուրս էր գալիս ստուգելու քաղաքի մաքրությունը:

Հիշում էր, ինչպես էր հոգին փառավորվում, երբ նայում էր փայլող փողոցներին, վեր սլացող մատղաշ ծառերին, հարդարված, կենդանակերպ ու թռչնակերպ ձևավորված կանաչ թփերին ու մրմնջում. «Կգան ավելի երանելի ժամանակներ, քաղաքը կմեծանա, ավելի կգեղեցկանա, մարդիկ ավելի երջանիկ կլինեն»: Այդ տարիները կարծես եկան: Քաղաքի փողոցների գույնը գույն լամպերի աստղաբույլերին նորանոր ձևեր էլ տրվեցին: Գիշերը քաղաքը լողում էր խայտաբղետ լույսերի ծովում, խանութները լցվել էին, բայց նա այլևս քաղաքապետ չէր, որովհետև մի օր հանդգնել էր առարկել վերադասին, թե մենք կուսակցության անունից դեմոկրատիա ասելով խեղդում ենք ամեն բան: Ժողովուրդը էլ չի հավատում մեզ:

— Փառք տուր, որ երեսունյոթ թիվն ու Ստալինը անցյալ են դարձել,— ասել էին ու, խիստ նկատողություն գրանցելով, պաշտոնագուրկ արել:

Մի քանի տարի էլ տնկարաններից մեկում բրիգադիր աշխատելուց հետո անցել էր ծերության թռչակի:

Իսկ երբ թերթերից մեկում կարդաց Խրուշչովի քննադատական ելույթը, որ կան կուսակցականներ, որոնք միայն անդամատոմսով են մնացել կուսակցական, շատ ուրախացավ, բայց այդ ուրախությունը, ասողի հետ էլ գրողի ծոցը ուղարկեցին:

Հետո շղարշված կրկնվեց հինը, մինչև ծնվեց «վերակառուցում» հասկացողությունը, իսկ շղարշված ու մանվածապատ անցած տարիներին էլ կպցրին լճացման տարիներ» պիտակը...

Վերակառուցումը կարծես մարդկանց հնարավորություն տվեց ազատ արտահայտվել, գրել, կարծիքներ փոխանակել, իբրև ուղիներ են փնտրվում կյանքը ավելի ազատ, ուրախ, խոսքը՝ գործ դարձնելու համար, բայց ոչինչ չէր փոխվում, շարունակվում էին անօրինականությունները ու փշոցները, կրճատվում էին բարիքները, ապրելը ավելի էր դժվարանում:

Այդ օրը Ծջմարիտյանը հիվանդ էր, երբ փողոցից լսվեցին «Միացում, միացում», «Ղարաբաղը մերն է» վանկարկվող կոչերը:

Նա դուրս գալով պատշգամբ, մի պահ կարծեց, թե մայիս-մեկյան շքերթն է, սակայն առաջնորդների նկարների, լոգունգների, գույնզգույն պաստառների, ալ դրոշների փոխարեն դեպի երկինք բռունցքված ու քարացած ձեռքերի անտառ էր: Իսկ երբ իմացավ, որ Ղարաբաղը Հայաստանին միացնելու կոչ է, նա ուրախացավ, հետո էլ մոռացավ: Ուրախացավ, որ ժողովրդի ազատատենչ ոգին, պատմական հիշողությունը չի խամրել, բայց տխրեց, որովհետև Լենինյան կուսակցություն կոչեցյալը այդ արդար պահանջը միշտ ոտնահարել է և իր թքածը չի լիզելու: Եվ հիշեց նրանց, ովքեր հավատալով կուսակցության ազգասիրական կարգախոսներին, փորձել են նորից բարձրացնել Նախիջեվանի, Ղարաբաղի հարցը, բայց արթնացել են բանտերում, Սիբիրում:

— Չէ, սա էլի ծուղակ է, արյան սովոր կուսակցությունը նորից արյուն է հեղելու, ժողովրդին իրար քսի տալով:

Եվ իր կարծիքը, որ լոկ արյուն է հեղվելու, փորձեց ուրիշների՛նը դարձնել, բայց խիստ վիրավորեցին, մեղադրեցին նույնիսկ դավաճանության մեջ: Անցան փոթորկված երկու տարիները և նա խիստ զարմացավ թե ինչպես կուսակցությունը այդքան հեշտ հրաժարվեց իշխանությունից, թույլ տվեց, որ դեմոկրատական ԽՍՀՄ կոչվածը, բայց իրականում կուսակցական բացարձակ միապետությունը փլուզվի:

Իսկ Հայաստանի ազատ, անկախ հանրապետության հռչակման օրը Ծջմարիտյանն էլ «այդ» քվեարկելով ասաց.

— Փառքդ շատ, եթե այս ամենը ճշմարիտ է, եթե կարմիր սուտը անցյալ դարձավ:

Իսկ այն հորջորջվող կարգախոսով, թե ոռուս է մեզ ստորկացնողը, պետք է ընդմիշտ թոթափենք նրա լուծը, նրան վրդո-

վեցրին. «Ինչ էլ լինի, ռուսի մեջքով ենք մեր երկիրը շենացրել»: Եվ ավելի դառնացավ, երբ օրերի հետ չորս կողմից օղակեցին Հայաստանը: Ծարունակեցին բարակել դրսից եկող օգնության երակները, հետզհետե դատարկվեցին խանութները, կանգ առան գործարաններն ու ֆաբրիկաները, մեռավ շինարարությունը: Չքացավ նաև միաձույլ դարձած ազգի ոգևորությունը և սկսեցին իրար մեղադրել ավան-թալանի, անհասանելի թանկությունների, հողի, արտադրական միջոցների սխալ սեփականաշնորհման, երեսույ դեպի Թուրքիան շրջվելու համար: Նա դառնագին խորհում էր և ամեն անգամ մտովի կրկնում մեծ Լոռեցուն. «Եթե անկախ Հայաստանը դառնալու է մի փոքրիկ վանդակ ամեն կողմից դրոները փակված և միակ դուռն էլ, որ բաց է— բաց է տաճիկ ասկյարի համար՝ չենք ուզում»:

Նա էլ շատերի նման անցած ձմեռը ծանր տարավ, բայց հաշտվեց, ինքն իրեն ասելով.

— Սա էլ կանցնի, էս ջահելները երևի խելքի կգան, թուրքի պոչից բռնելու փոխարեն, էլի ռուսին կփնտրեն:

Իսկ երբ նոր ձմեռը ավելի դժնդակ եղավ, գազն ու լույսն էլ սև աղվեսի մորթի դարձան, նույնիսկ իրեն հասանելիք կտրոնով տրրվող մի կտոր հացն էլ չկարողացավ գնել, ցրտից անկողնուց դուրս չեկավ, իրենց փողոցի երկայնքով ծառերի շարքերը օրեցօր նոսրացան, հետո էլ անհետացան, երեխայի նման անզոր լաց եղավ:

Հունվար ամսվա ցուրտ ու դաժան օրերից մեկն էր: Նա մութ ու ցուրտ սենյակում պառկելուց հետո հոգնած ու չարացած վեր կացավ ու գնաց բողոքելու, սակայն քաղաքային ոչ մի փոխադրամիջոց չէր աշխատում: Ստիպված հույսը դրեց ստուած ոտքերին ու ձեռնափայտին: Նա երեքավով հագիվ էր քայլում, որովհետև ձյունից չմաքրված, սառցակալած մայթերը հայելու պես փայլում էին:

Փողոցներում ձյունածածկ աղբի բլուրներ տեսավ, փողոցների երկայնքով, մայթերի հարևանությամբ՝ վաճառասեղանիկներ, բոլորված դպրոցահասակ երեխաներով, շան բների նման ծածկեր, նրանց շուրջը ձյունն ու ասֆալտը սևացնող վառված անվադողերի մութ, մնացուկներ, հանգած ու վառվող օջախաստեղեր:

«Սա քաղաք չէ, սա կեղտոտ շուկա է, երեխաներն էլ չարչի են դարձել»,— մրմնջում էր ինքն իրեն ու շտապում: Զայրույթից

սիրտը ավելի էր տրոփում, երբ հանդիպում էր կիսաքանդված կանգառների մոտ ստվարաթղթերին և ստած մեծ ու փոքր մուրացկանների:

— Հայը մուրացկա՞ն, էս ինչ օրի հասցրին...

Անցնելով փողոցից-փողոց, նա ավելի էր մոայլվում, նայելով պատերի մեջ նոր երկաթագամ դռներին ու դռնակներին, ճակատին էլ գրված՝ «Առևտուր», «Սրահ», «Վաճառատուն», «Դռներցիոն խանութ»:

Իսկ ապակեպատ գեղեցիկ ցուցափեղկերի ջարդոտված ապակիների փոխարեն հին ու նոր հաստ թիթեղ, երկաթակոտ ցանց էին գողել, շունն էլ ներսում պահակ կարգել:

— Էս ի՞նչ են արել քաղաքը:

Նա զայրույթից ավելի սեղմեց ձեռնափայտը, շարունակեց քայլել, հանդիպելով նաև ճյուղակոտոր, տեղ-տեղ էլ դեպի երկինք աղերսող, ինչպես իրենց փողոցում, բնահատված ծառերի կոճղերի, փողոցում վաճառվող բենզինից, նավթից, մեքենայի յուղից, կրակատեղերով կարկատված մայթերի ու փողոցների բանուկ մասերի, պատուհաններից դուրս ցցված ծուխ ու մութ արտանետող ծխնելույզների: Մի պահ նրան թվաց, թե այդ բոլորը մղձավանջում է տեսնում, բայց...: Հանդիպեց նաև ցրտից կուչ եկածների, որոնք տոպրակներով, մանկական սայլակներով փայտի, ճյուղերի կտորտանք էին տեղափոխում:

Նա երկար-երկար նայեց ձյունաթաթախ աղջնակին, որը քաշում էր փայտով բեռնված մանկական սայլակը, իսկ մի կին, շալի մեջ փաթաթված ու կռացած հրում էր սայլակը: Ուզեց կանգնեցնել խոսել, բայց հուզմունքից խցանվել էր կոկորդը:

Կրկին հիշեց Հայրենականի տարիները...

Այն ժամանակ խիստ կարիքավորները նորմավորված հանապազօրյա հացի նման, վառելափայտ, քարածուխ էին ստանում: Իսկ երկու տարի շրջափակված Լենինգրադում ծառ չէ, ճյուղ անգամ չէր կտրվել: Մենք մեզ համարում ենք հին մշակույթ ունեցող ժողովուրդ: Ախր...— ականա բարձրացրեց ձայնը, հետո էլ նայեց շուրջը թե լսող չկար, որ հոգեկան հիվանդի պես ինքն իրեն խոսում է: Բայց ավելի դառնացավ, երբ լսեց դիմացից եկող, ճյուղերի կտորտանքը գրկած, կմախքանման կնոջ անեծքը. «Հողես ձեր գլուխը, սա էր ձեր անկախությունը»:



Նա ծանր մտորումների մեջ արդեն մտտեցում էր քաղաքապետարանին, երբ նորից սթափվեց ճոռոցից ու խշռոցից, հետո էլ խուլ թրմփոցի ձայնից: Տապալված ծառի շուրջը բոլորած պատանիներն ու երեխաները կացիներով ու սղոցներով լեշի վրա թափվող ագռավների նման վրա տվեցին ու սկսեցին տապալված ծառը քրքրել: Անցնող-դարձողները նայում էին, գլուխները լուռ շարժում ու անցնում:

Քայլերը ուղղեց դեպի տապալված ծառը, մոտեցավ տարիքն առած մարդուն, որը մեծ սղոցը ձեռքին, մեծ գործ արածի գոհ հայացքով նայում էր ճյուղահատողներին, ասաց.

— Բա դուք խիղճ ունե՞ք, չե՞ք հասկանում, որ կանաչ եղեռն եք անում: Քանի՞-քանի՞ տարի է պետք, որ այդպիսի մի ծառ մեծանա քաղաքում:

— Է՛, ժողովուրդը ձեռքից գնում է, դուք էլ... մի հարցնող լինի, էս երկրից չեք, բոլորն էլ կտրում են, հո ցրտից չենք սատկելու: Հիվանդ, քեզ նման ծերեր կան, երեխան էլ է տաքանալ, ուտել ուզում: Թե որ կարողանաս, դու էլ կկտրես: Չես կարողանում, դրա համար էլ փնթփնթում ես:

Նա ուզեց ասել, թե անշնորհք, գոնե ճյուղերը կտրեք, բայց չասաց, որովհետև իր արածից գոհ մարդը մոտ կանչելով պատանիներից մեկին, մեծ սղոցի մի ծայրը նրան մեկնելով ասաց.

— Բռնիր, էս մարդու խելքը գլխին չի, կանաչ եղեռնը ի՞նչ է:

Նա զայրույթից ձեռնափայտը ավելի պինդ սեղմելով ասաց, որ դիմացինը բթամիտի մեկն է, ու շարունակեց ճամփան, մտածելով, թե քաղաքապետարանում պիտի հարցնի՝ «Անցած տարվա ձմռան ականատես պաշտոնյաներն ինչո՞ւ չմտածեցին, չանհանգրտացան, ինչո՞ւ չնախապատրաստվեցին այս ձմռանը: Եվ ովքե՞ր պիտի պատասխան տան հանցագործ անգործունեության համար, նաև նրա համար, որ ջեռուցման բացակայության հետևանքով դպրոցները փակվեցին, երեխաներին փողոց նետեցին, չարչիություն սովորեցրին: Եթե սերունդը այդպես է դաստիարակվում, վաղը ի՞նչ ազգ ենք լինելու: Եթե այսօր նա ծառն է գլխատում, վաղն էլ իրար չե՞ն գլխատելու»: Եվ իրեն օրինակ բերելով, պիտի նաև ասի, ինչո՞ւ ինքը երեք լիտր նավթի արժեք ունեցող թոշակով կդիմանա, իսկ... «Չէ, էս մեկը չեմ ասի, էս մեկնակ, չոր գլուխ եմ, անկողնու տակից էլ դուրս չեմ գալիս,

մի բաժակ թեյով ու մի կտոր չոր հացով, եթե լինում է, օրս անց եմ կացնում, ապրում, թե ապրել է սա»: Մտքերի հետ կոիվ տալով գնում էր, «Պայքար, պայքար, մինչև վերջ» կարգախոսի առաջին բառերը փոխելով «քանդել, քանդել» խոսքերով:

Երբ գայթում էր, կտրվում էր մտքի թելը: Կանգնում էր, մեջքը շտկում, նորից վախվորած քայում: Քանի-քանի անգամ որոշեց հետ դառնալ, վախենալով, որ կընկնի, տեղ չի հասնի, բայց գնաց և հեալով բարձրացավ երկրորդ հարկ, կարդալով դրան ցուցանակը, ներս մտավ, բայց ձայնի փոխարեն կոկորդից խոլ հևոց դուրս եկավ:

Բազկաթոռում փառավոր նստածը, ուները զարմացած վեր բաշելով մինչև մեծ գլուխը, փսիսաց.

— Լսում եմ Ձեզ:

Նա ոտքի վրա, դողդողալով երկու բառով ասաց, թե ով է եղել ինքը և ինչու է եկել:

Նախագահը մի պահ լուռ շրթունքները կրծոտեց և հայացքը առանց սեղանից կտրելու, խոսքերին էլ պաշտոնական տոն տալով ասաց.

— Պարոն Ծջմարիտյան, նման հարցերով դիմիր տեղակալիս, դիմացի դուռն է:

Տեղակալը նույնպես երիտասարդ էր, բայց նախագահի հակապատկերը, փոքր գլխով, սև ու խորամանկ աչքերով, որն իսկույն աթոռ առաջարկելով ժպտաց:

— Ձեր խոնարհ ծառան լսում է Ձեզ:

Նա սկսեց պատմել, թե ինչու է եկել և գալու ժամանակ ինչերի է հանդիպել, ականատես եղել, որոնք ավելի էին վրդովեցրել իրեն:

Մինչև նա պատմում էր, ուրիշ աշխատողներ էլ ներս մտան, խառնվեցին զրույցին: Իսկ նրանցից մեկը կծու ու բարձրաձայն ասաց.

— Սրանք կարծում են մենակ իրենք գիտեին մտածել ազգի մասին, ձեր մտածելն էլ ենք տեսել:

Նախագահի տեղակալը կիսաժպիտ դիտողություն անելով բարձր խոսողին, ավելացրեց.

— Պարոն Ծջմարիտյան, ինչ հնարավոր է արվել է, արվում է և էլի կարվի:



Եվ կրկին թվարկեց այն խիստ օբյեկտիվ պատճառները, որոնք ծանր վիճակի են հասցրել հանրապետությանը: Հետո էլ շեշտեց.

— Աստված էլ իջներ, էլի չէր կարող անել այն, ինչ արվել է: Զրույցի մասնակիցները հաստատում էին նախագահի տեղակալի պատճառաբանությունները:

Կարծես համոզելով նրան, թեանցուկ արած, որպես հարգանքի տուրք դուրս տարան, պատճառ բռնելով, թե արդեն երեկոյանում է, քաղաքում տրանսպորտ, լույս չկա, փողոցներն էլ՝ սառույց, պիտի շտապի, որ գոնե ցերեկով տուն հասնի:

— Իսկ մայրերը, առանց բեկզիմի հնարավոր չէր մաքրել,— ասել էր նա, դեռ դռանը չհասած, որովհետև քաշելու նման էին դուրս տանում:

— Գնա, գնա, մտիր անկողին, մինչև օրերը կտաքանան,— ասաց թևից քաշողներից մեկը, երբ արդեն միջանցքում էին:

Իսկ երբ բազրիքից բռնած իջնում էր ու մտածում՝ թե սրանք ոնց որ իրեն դուրս նետեցին, հանկարծ ականջին հասավ.

— Ո՞վ էր էդ մեռելի գոաշին, ինչո՞ւ ավելի շուտ չցանեցիք: Նա համոզվեց, որ իրեն պարզևած ժպիտները, նախագահի տեղակալի շոյող խոսքերը շինծու էին, իրեն ձեռ էին առել: Գըլ-խապտույտով շենքից դուրս գալով հենվեց պատին, որ չընկնի:

Անցնող-դարձողներից ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, բոլորը մտածկոտ ու ցրտից կծկված շտապում էին:

«Էս ե՞րբ այսքան անտարբեր դարձանք մեկս-մյուսիս նկատմամբ: Առաջ մեկը վատ զգար, կշրջապատեին, իրենց օգնությունը կառաջարկեին»,— մրմնջում էր նա:

Հետո կարծես մղձավանջից սթափվելով, վերագտավ իրեն, սկսեց կամաց-կամաց քայլել դեպի տուն: Դեռ ճանապարհը չէր կիսել, սառը ու ճնշող մութը աննկատ լցվեց ձյունածածկ փողոցները, և ցուրտ քաղաքը կարծես անշնչացած, մութ ու սառը մի զանգված, թաղվեց խավարի մեջ:

Նա մի պահ փակեց աչքերը ու մտովի տեսավ գիշերային լույսով ողողված նախկին քաղաքը, ձնագնդի, սահնակով խաղացող երեխաներին, ուրախ-զվարթ զբոսնողներին:

Բացելով աչքերը, նայեց դիմացի շենքի մի քանի պատուհաններից երևացող դեղնագույն ու թույլ առկայծող լույսերին:

Ինքն էլ է երեկոները մոմ վառում, բայց միայն թեյ խմելու ժամանակ, որովհետև ամեն ինչ թանկ է, իսկ թոշակը...

Դատը մտորումների մեջ ու վիրավորված, կույրի նման էլ ձեռնափայտով ոտքերի առաջը տնտղելով գնում էր: Հատուկենտ երևացող մեքենաների լույսերը մեկ օգնում էին ոտքերի առաջը տեսնելու, մեկ էլ դիմադարձ լույսով կուրացնում անքերը: Այդ պահերին անքերը փակ կանգ էր առնում մինչև կուրացնող լույսը անհետանա:

Նա հավատացած չէր, որ կարող էր ողջ տուն հասնել, բայց երբ մոտեցավ իրենց շենքին, շնջաց. «Ուրեմն՝... էսպես ապրելը ո՞ւմ է պետք»: Իսկ մութ մութի առաջ կանգ առնելով փորձեց խոր շունչ քաշել, բայց հանկարծ սրտի սուր ծակոցից կծկվեց: Մի պահ այդպես մնալով, շունչը նորից տեղը եկավ և ներս մտնելով մութից, շոշափելով ու տնտղելով գտավ անշարժ վերելակի դռնակը, որի կողքից էլ սկսվում էին աստիճանները: Եվ էլի ձեռնափայտի օգնությամբ գտնելով բազրիքը, սկսեց ծանր շնչելով բարձրանալ:

— Էս մեկ,— ասաց նա, երբ հասավ երկրորդ հարկ:

Երրորդն էլ հաշվեց, սակայն չորրորդ հարկի աստիճանները չկիսած, անքերը մթնեցին, ծնկները ծալվեցին, ու շնչահեղձ փլվեց աստիճաններից: «Միթե՞ մեռնում եմ»: Հիշեց հանգուցյալ կնոջը և ուզեց ասել՝ «Գալիս եմ...», բայց օդի կարոտ բաց բերանի մեջ լեզուն փայտացել էր, իսկ ականջներում դեռ ղողանջում էին՝ «Ո՞վ էր էդ մեռելի գդաշին, ինչո՞ւ ավելի շուտ չցանեցիք»:

հունվար 1993 թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

|                  |           |     |
|------------------|-----------|-----|
| Դե արի մնա       | . . . . . | 3   |
| էլի Սիլվան է     | . . . . . | 4—5 |
| Ձայն Շիրազի      | . . . . . | 6—7 |
| Ի՞նչ հս տնկել    | . . . . . | 8   |
| Ե՛րբ պիտի հասնես | . . . . . | 9   |
| Չպետք է ծնկես    | . . . . . | 10  |

### ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

|                          |           |       |
|--------------------------|-----------|-------|
| Մենք հաղթելու ենք...     | . . . . . | 11—14 |
| Նա չէր մեռնում           | . . . . . | 15—19 |
| Հուշերը հանգչող ուղեղում | . . . . . | 20—22 |
| Ծածկել էի աչքերը, որ...  | . . . . . | 23—31 |
| Հետո կիմանաս             | . . . . . | 32—39 |
| «Վտանգավոր մարդը»        | . . . . . | 40—47 |
| Ինչ իմանաս...            | . . . . . | 48—51 |
| Այստեղ շեն խոսում        | . . . . . | 52—59 |
| Հացի հերթում             | . . . . . | 60—65 |
| «Աղբահավաքը...»          | . . . . . | 66—68 |
| Վիրավորված սիրտը...      | . . . . . | 69—70 |

ՕՐՀՆՎԱԾ ՀՈՂ

ԻԼՅԱ ԱՐՑԱԽԵՑԻ

«Աղվանք» հրատարակչություն

Խմբագիր՝ Ս. Թ. Խոջայան  
Նկարիչ՝ Ս. Ա. Մինասյան  
Տեխ. խմբագիր՝ Հ. Ս. Սարգսյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Ռ. Ս. Պողոսյան

Դասիչ 821

Պատ. 146

տպաքանակ 4000

Հանձնված է շարվածքի 15.5 93 թ : Ստորագրված է տպագրության 4.06.93 թ. :  
Թուղթ տպագրական 60 × 84<sup>1</sup>/<sub>16</sub>, տպագրությունը՝ բարձր, տառատեսակը՝ «Նորք»,  
հեղինակային 3,5 մամուլ, տպագրական 5 մամուլ :

ԳԻՆԸ՝ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ

Հ. Մեղապարտի անվան պոլիգրաֆիական արտադրական միավորման օպերատիվ  
№ 1 ձեռնարկության տպարան : Երևան, Գ. Նժդեհի, 56 :

